

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԿԱԶԱԽՈՎԻ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԳՊԲՈՅԻ

ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գեղական Հրատարակչություն. Յերեվան—1928

1  
2  
3  
4

ՍԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ

372 / 3

ԿԱԶԱԽՈՎԿԻ


4-

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔԸ

20139

A 4554



**N 689**

**Գրառեպվար N 552 (բ)**

**Տիրու 4000**

**Գետհրատի առաջին տպարտն Վաղարշապատում**

ԳՅՈՒԳԱԿԱՆ ԴՊԲՈՑԻ ՀԱՍՏԱԿԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՎՐԸ

Դպրոցի հասարակական աշխատանքի հարցը  
դարձել է որվա ամենակարևոր խնդիրներից մեկը,  
վորի մասին շատ եւ խոսվում ու գրվում։ Այդ  
հարցը մշտապես զրվում եւ գավառական և նա-  
հանգական համագումարներում լուսավորության  
աշխատակիցների կողմից և վորակավորման հան-  
ձնաժողովների կողմից մշակվում եւ։ Այսպիսով,  
մեր մասսայական դպրոցն աշխատանքի հասա-  
րականացումը որակարգի մեջ եւ դրել և այդ  
ուղղությամբ վորոշ փորձ ունի։ Բայց դժբախ-  
տությունն այն ե, վոր շարքային դպրոցի աշ-  
խատավորը սովոր չեւ դեռևս մամուլի միջոցով  
մասնակից դարձնելու ուրիշներին իր փորձառու-  
թյանը, իր ձեռք բերած հաջողություններին. նա  
լուսամ ե։ Ահա թե ինչու գյուղի շարքային դպրո-  
ցի պայմաններում հասարակական աշխատանքի  
վերաբերյալ աղքատիկ գրականություն ունենք  
մենք։ Մինչդեռ նման գրականության կարիքը  
շատ մեծ ե։ Դպրոցի հասարակական աշխատան-  
քի ծավալման փորձերը, վորոնց աված արդյունք-

Ների մասին հաճախ գրվում ե մեր մանկավարժական հանդեսներում, յերակետ ունեն մեծ մասամբ կոմմուն. դպրոցները կամ փորձնական-ցուցադրական դպրոցները. դպրոցներ, վորոնք թե նույթականի և թե աշխատակիցների վորակի տեսակետից ավելի բարեհաջող պայմաններում են գանվում:

Լուսավորության համագումարներում լսվում ե հաճախ, վոր մասսայական դպրոցների փորձնական հիմնարկությունները գործնական լինելուց զեռ շատ հեռու լին. շարքային դպրոցների ուժերից վեր ե այնպիսի աշխատանքներ կատարելլ, ինչպես, որինակ՝ կամուրջների կառուցումն ու վերանորոգումը, ելեկտրիֆիկացիան, հողային աշխատանքները, այդիների ու կոռպերատիվների կազմակերպումը ե այլն։ Մասսայական ուսուցիչը ձգտում է հասարակական աշխատանքի այնպիսի ձեեր գտնելու, վոր շարքային մասսայական դպրոցը կարողանա հաղթահարել, վորոնց միջոցով դպրոցը կարողանա ձուլվել գյուղական կյանքին և նրա անհրաժեշտ բաղադրիչ մասնիկը դամապար: Պ. Գլու. Խորհրդի ծրագրերը, վոր արդեն հաստատուն արմատ են տվել դպրոցներում, համառեն պահանջում են հասարակական աշխատանք: Շրջապատի իրականությունը լարելիս գնում է դիտող ուսուցիչը տեսնում և, վոր

գյուղն աճում ե, ընդարձակվում, վոր գյուղը չի  
հաշտվում այն ժառանգության հետ, վոր նա ստա-  
ցել ե պապերից ու նախահայրերից։ Գյուղի տըն-  
տեսական աճումն ընթանում ե նրա քաղաքական  
աճմանը զուգընթաց։

Խորհրդային և հասարակական ստորին ապ-  
պարատը միշտ չի կարողանում հոգալ այն կա-  
րիքներն ու խնդիրները, վոր առաջադրում ե գյու-  
ղըն իր տնտեսական ու քաղաքական աճման ըն-  
թացքում։ Այդ ապարատը լերբեմն անպատճառ  
և լինում աշխատանքը ծավալելու և սիստեմա-  
տիկ ձեռվ վարելու համար։ Միանգամայն հաս-  
կանալի յե, վոր կոնկրետ պարմանները հաշվի առ-  
նող, իր անելիքներն ու իր դիրքը խորհրդային  
շինարարության մեջ ըմբռնող դպրոցը չի կարող  
մեկուսանալ և հնարավոր չափով չմասնակցել  
այն խնդիրների լուծմանը, վոր իր ուժերից վեր  
չեն։ Դիտելով դպրոցական աշխատանքը՝ վորո-  
շակի կարելի յե ասել, վոր դպրոցը վոչ միան  
հասարակական աշխատանքի խնդիրն ե դրել իր  
որակարգում, այլև վարում ե այդ աշխատանքը։  
Ուսուցիչը հասկանում ե իր դերը և իր առաջ  
դրված խնդիրները գյուղում, գիտակցում ե իր  
դիրքի ամբողջ պատասխանառությունը, բայց  
միենուքն ժամանակ նա իր աշխատանքի համար  
աջակցություն և դեկաֆարություն և փնտում։

Անհրաժեշտ ե թե մեկը և թե մյուսը տալնրան։  
Շատ բաներում դպրոցը գետ մոլորվում է։ Կան  
դպրոցներ, վորոնք միանգամից, իրենց ուժերից  
վեր միքանի աշխատանք են վերցնում կատարե-  
լու։ հաճախ աշխատանքը միակողմանի յեն կա-  
տարում, հասարակական աշխատանքը կատարում  
են վորպես արտադպրոցական աշխատանք, տուանց  
անմիջականորեն այդ աշխատանքը Պետ. Գիտ.  
Խորհրդի ուսմունքի, ծրագրերի հետ կապելու։

Եթե խորհրդավին դպրոցն իր ամբողջ աշ-  
խատանքով պետք ե սերտ կերպով կապվի իրեն  
շրջապատղ իրականության հետ, յեթե դպրոցը  
պետք ե համարվի գյուղական որդանիզմի մի  
մասնիկը, ինչպես մեքենայի անհրաժեշտ մի  
պտուտակը, առանց վորի անհնարին ե այդ մե-  
քենայի ճիշտ աշխատանքը, ապա ուրեմն այդ  
նշանակում ե, վոր դպրոցը պետք ե հաշվի առնի  
ավալ շրջանի ուսումնասիրության բոլոր ավյալ-  
ները։

Հաճախ կարելի յե տեսնել, վոր դպրոցն աշ-  
խատելով Պետ. Գիտ. Խորհրդի ծրագրով շատ  
հարուստ նյութեր ե հավաքում, վորն ոգտագործ-  
վում ե միան աշակերտներին մի շարք տեխնի-  
կական հմտություններ ձեռք բերելու հաղորդա-  
կից անելու համար, որինակ՝ դիագրամմաներ ու  
գրաֆիկներ նկարելու, հավաքած թվերի հիման

վրա լուծելու այս կամ այն խնդիրը, բայց չ  
ոգտագործվում այն բանի համար, վոր ամենա-  
գլխավորն ե, այն ե՝ յեզրակացությունների, վոր  
յելակետ ունենալով կարելի յեր ազգել գիտած  
յերեսությների վրա, տալով նրանց այն ուղղու-  
թյունը, վոր մենք ենք ցանկանում:

Այսպիսով, հասարակական աշխատանքի հիմ-  
քը շրջանի տեղական բնորոշ հատկությունների  
ոգտագործումը պիտի լինի:

Ուստի, այդ աշխատանքը կատարելու հա-  
մար, դժվար ե նախորոք մտածված միջոցներ  
առաջարկել: Դպրոցը պետք է իր աշխատանքը  
ծավալի այնպիսի մակարդակի վրա և այնպիսի  
ձևերով, վորոնք ամենից առաջ տվյալ շրջանի հա-  
մար յենթադրելի անհրաժեշտությունից բղիսն  
և այդ շրջանի ուժերին համապատասխանեն: Այն  
դպրոցը, վոր հաջող կատարում է իր հասարա-  
կական աշխատանքը, մի կողմից՝ գյուղական  
բնակչության աչքում յերեսում և վորպես վորոշ  
արժեք, մյուս կողմից, վոր ավելի կարենը ե, այդ-  
պիսի դպրոցը սովորեցնում է յերեխաներին մաս-  
նակցել գյուղական հասարակայնության, նրանց  
մեջ հավաքական աշխատանքի ունակություններ  
և ակտիվություն ե զարգացնում, աջակցում ե,  
վոր նրանք նոր կյանքի կառուցողները դառնան,  
վորոնք, անկասկած, իրենց ծնողներից ավելի առա-

ջաղեմ յինելով՝ կարող են ապագարում բարձրացնել գյուղական տնաեսությունը և սացիոնալի-զացիալի յենթարկել վողջ կենցաղը։ Յեթե դպրոցական հասարակական աշխատանքն իր վորոշնպատակն ունի, յեթե նա բոլոր աշխատանքերով ձուլվի գյուղական հասարակության, կոմյե-րիտմիության, պիոներական կազմակերպությունների և գյուղական բնակչության հետ, աշ-խատելով վերջիններին գործնականորեն հետաքրքրել կատարվող աշխատանքով, այդ աշխատան-քի մեջ քաշել, այդ գեղքում խորհրդավին դպրոցի ժամանակակից շինարարության մեջ դա նպա-տակների ու խնդիրների լավագույն ժողովրդա-կանացում կլինի։

Նայելով հասարակական աշխատանքները վարելու գործնականին՝ կարող ենք, անտարա-կույս, անդել, վոր այդ աշխատանքը մեծ մասամբ խալտարգետ, այլազան ու քառային եւ և առանց վորոշ ծրագրի յե կատարվում։ Դպրոցը վոչ այն-քան համառորեն զնում ե մի նախագծված ճանա-պարհով, հաստատուն կերպով վորոշ արդյունք-ների համանելով, վորքան «ցըրվում» ե, տարածվում, միաժամանակ ձեռք զարկում տարբեր աշխատանք-ների, սպառելով իր առանց այն ել սահմանափակ ուժերը։ Այստեղից անմիջականորեն բղխում ե վորեւ դրական արդյունքի բացակայությունը։

Երջանի կարիքները հսկայական են։ Մասսա-  
յական դպրոցի աշխատակիցը, մանավանդ յե-  
րիտասարդը, իրեն հատուկ եներգիալով, անմի-  
ջապես ուժեղ թափով գործի յե անցնում՝ դպրոցը  
դեպի հասարակական աշխատանքներ քաշելով ու  
գերազնահատելով թե իր ուժերը, թե որյեկտիվ  
հնարավորությունները։ Սրանից պետք ե վեր-  
ցընել միայն աշխատանքի թեկուզ փոքրիկ, մի ան-  
նշան մաս, վորից դպրոցը, ինչպես մի կողեկալիվ,  
վորոշ չափով կստանա աշխատանքի մեջ հմտու-  
թյուն ձեռք բերելու կարողություն, արդյունք-  
ներ ստանալիս կգիտակցեն նրա ամբողջ գժվարու-  
թյունը և, վոր գլխավորն ե, աստիճանաբար կձուլ-  
վի հասարակայնության մեջ և կդառնա նրա ան-  
հրաժեշտ մի մասնիկը։

Վորքան դպրոցն իր հասարակական աշխա-  
տանքով դուրս ե գալիս վորպես կողեկալիվ, վոր-  
պես ամբողջական (самодовлеющая) որդանիզմ,  
այնչափ անհրաժեշտ ե, վոր այդ աշխատանքն ստա-  
յական, միայն արտաքուստ դպրոցական հիմնա-  
կան աշխատանքներին կապված չլինի։ Դա չպետք  
ե լինի «արտադպրոցական», ազատ ժամանակի,  
դրան մասնակցող յերեխաների ցանկության և  
հոժարակամության աշխատանք։ Նա պետք ե ան-  
միջականորեն բղխի Պետ. Գիտ. Խորհրդի ծրա-  
գրերից, պետք ե դպրոցի ուսման աշխատանքների

հետ սերառըեն միավորված լինի, և միայն այս  
դեպքում այն ունակությունները, գիտելիքները  
և կարողությունները, վոր տալիս ե դպրոցը, յե-  
րեխանները կամրապնդեն, կամրապնդեն գործնա-  
կանորեն և վոչ թե խոսքով, վերացականորեն:

Հասարակաբնորեն ոգտակար ի՞նչ աշխատանք  
կարող ե կատարել մասսայական դպրոցը գյու-  
ղում:

Զանանք պատասխանել այս հարցին պար-  
զապես մի շարք խնդիրներով, վորոնց իրավոր-  
ծումը լիովին մատչելի լի շարքալին դպրոցների  
ուժերին:

## ԳՅՈՒՂԻ ԱՆՈԽՆԸ ՎԵՐՏԱՌՈՂ ՏԱԽՏԱԿՆԵՐ

Գյուղից-գյուղ անցնող ճամպորդների մեջ կան  
շատերը, վորոնք անծանոթ լինելով այդ գյուղե-  
րին՝ ստիպված են լինում գյուղից-գյուղ հարց ու  
փորձ անելով գնալ, ոգտագործելով հին ասացված-  
քը՝ «Մարդ հարցնելով Բաղդադ կհասնի»: Պատա-  
հում ե, վոր անցորդը չի հասկանում ցուց տված  
ուղղությունը կամ այդ ուղղությունն իրեն պարզ  
չեն հասկացնում, իսկ աշխատանքի ժամերին  
մարդ ել չի լինում, վոր հարցնես, թե ուր գնաս,  
և ճամպորդը ժամերով թափառում ե, առանց այն  
համոզման, թե իր բռնած ուղղությունը ճիշտ ե:  
Դպրոցը, կարող ե և պետք ե ոգնության հասնի

ճամապորդին, վոր նա ավելորդ ժամանակ և ուժ  
չվատնի: Նա կարող ե իր վրա վերցնել սյուներ  
տնկելու գործի նախաձեռնությունը, վորոնց ամ-  
րացված տախտակների վրա վերտառություններ  
լինեն, վորոնք գյուղից-գյուղ տանող ճանապարհի  
ուղղությունը նշեն: Որ:

Արարան Տանող ճանապարհը՝ Յ վերս  
(Յ կիլոմետր):

Գյուղի սկզբին ու վերջին կարելի յե գյուղի  
անվան վերտառությունը գնել.—

Բաշյառնի գյուղ.  
Տեսեսություն՝ 27

Բնական ե, վոր դպրոցն այս աշխատանքը կա-  
տարելով՝ պետք ե դրանով ձեռք բերի նաև կրթա-  
կան մատերիալ, վորի ելությունը պետք ե լինի  
գյուղից-գյուղ տանող տարածության չափումը և  
տվյալ գյուղի տնտեսությունների քանակը: Աշ-  
նանը կամ գարնանը այն խմբի յերեխաները, վոր  
հանձն ե առնում այդ աշխատանքը կատարել,  
վերցնում են 25 սաժ. (50 մետր) չափի թոկ, մի-  
քանի ցից, թուղթ ու մատիտ և մեկնում են գյու-  
ղերը հեռավորությունը բանուկ ճանապարհներով  
չափելու: (Թոկը հեշտությամբ կարելի յե փոխա-  
րինել կանեփի թելով, վորի կծիկն արժե 25 կոպ.):

Գլուղերի միջն յեղած տարածության չափումը կարող է ոգտակար լինել և մեր հիմնարկություններից միքանիսին։ Որինակ՝ գավլուբաժինը, գպրոցական ցանց կազմելիս, չափազանց շահագրգոված և ավելի ճիշտ տվյալներ ունենալ հեռավորությունների մասին, քան ստանում և տեղերից։ Գլուղերի միջն յեղած տարածության մոտավոր չափը հաճախ սխալների պատճառ և դառնում։ գավլուսբաժնի հարցումներին՝ յերկու միմյանց մոտիկ գտնվող գլուղերի կամ գպրոցների միջն հեռավորության մասին, հաճախ տալիս են իրար միանդամայն վոչ նման պատասխաններ, այնպես վոր տարբերությունը հասնում է 2—3 վերտի։ Պարզ է, վոր գպրոցների կողմից գլուղին սպասարկելու խնդրում մեծ դեր է խաղում գլուղերի միջն յեղած հեռավորության հարցը։

**Մեծ դժվարությունների հետ կապված չեալի տարածությունների չափումը, տվյալ գլուղի անտեսությունների հաշվառումը.** գպրոցականները կարող են տեղեկանալ այդ մասին ստացած տվյալները գլուղիսորհրդի տվյալների հետ համեմատելով։

**Անավասիկ մի պարզ աշխատանք,** վոր լիովին համապատասխանում ե լուրաքանչյուր գպրոցի ուժին։ յեթե գպրոցն սպասարկում է միքանի գլուղեր ունեցող շրջանի, նա կարող է նույն աշխատանքուն կատարել աշուշտարով։

ՊԱՅՉՅՈՒԹ ԽՄԵԼՈՒ ԶՈՒՐ ՎԵՐՅՆԵԼՈՒ ՏԵՎԱՅՈՒԹ  
ԿԵՊՏՈՏԵԼՈՒ ԴԵՄ

Մեր գյուղերի մեծ մասը ջրհորների ջրով ե  
ոգտվում. հասարակական առողջապահության տե-  
սակետից ռացիոնալ կերպով չի լինում այդ ոզ-  
տագործումը: Այսպիսով, գյուղում խմելու ջուրը  
մաքուր պահելու հարցն անհետաձգելի խնդիրնե-  
րից մեկն ե, քանի փոր ջրի կեղտոտվելուց հն  
բազմաթիվ հիվանդություններ առաջանում: Ին-  
չով կարող ե ոգտակար լինել դպրոցը հասարա-  
կական այս կարեռը խնդրի լուծման գործում:

Դպրոցը պետք ե իր վրա վերցնի խմելու  
ջրի հասարակության կողմից ոգտագործվող տե-  
ղերի պահպանությունը և հետեւալ աշխատանք-  
ները կատարի. մաքրի ջրամբարը կեղտոտու-  
թյուններից, ջուրը հոսելու համար ջրանցքներ  
փորի, ջրամբարի շուրջն ավագ ցանի և տախ-  
տակների վրա ալսովիսի վերտառություններ անի.

Միայն մայուր դույլով ջուր հանեցե՞:

Պահպանեցե՞ ջուրը կեղտություններից:  
Կեղտու ջուրը աղբյուր ե հիվանդությունների:

և այլն:

Ցեթե գյուղում պատի լրագիր ե լույս տես-  
նում, դպրոցը կարող ե հանդես գալ այստեղ  
ջուրը. կեղտոտավելուց պահպանելու մասին հոդ-

վածներով, կալող և դիտողություններ գրել  
խմելու ջուր վերցնելու տեղերի պահպանման  
գործում յեղած անկանոնությունների մասին:

Բացի գրանից դպրոցը կարող է գյուղական  
հավաքությներում հասարակական ոգտագործու-  
թյան համար գույլի անհրաժեշտության հարցը  
դնել՝ ապացուցելով, վոր հասարակական ոգտա-  
գործության համար փոքր ծախսով ձեռք բերած  
գույլը կհատուցվի տասնյակ գյուղացիների ա-  
ռողջության պահպանումով:

Այս աշխատանքի կատարումը նույնպես մեծ  
աշխատանք չի պահանջի դպրոցի կողմից, և այդ  
աշխատանքը հաջող կատարելու դեպքում բնակ-  
չության աչքում դպրոցի վարկը կբարձրանա:

## ՊԱՅՔԱՐ ԳՅՈՒՂԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԴՐՈՒ- ԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Միանգամայն ավելորդ կիներ՝ ապացուցել,  
վոր մեր գյուղերի մեծ մասը կեղտոտ և, վոր  
գարնանն ու աշնանը մեր գյուղերով անհնար և  
անցնել, վոր գյուղի բնակչությունը տարրական  
հասկացողություն չունի հասարակական առող-  
ջապահության պահանջների մասին և դրա հա-  
մար ել չի աշխատում վերացնել գյուղի կեղտո-  
տությունը: Միքանի դպրոց սկսել են արդեն  
պալքարել հակառակողջապահական յերեսությների

գեմ և բավական հաջող կերպով, բայց այդ դըալ-  
րոցների թիվը շատ քիչ եւ Անուանենախիվ, ա-  
նելու շատ բան կա:

Ի հարկե, դժվար եւ դպրոցի համար մենակ  
դլուխ բերել այդ գործը, բայց ան ել բավական  
ե, վոր նա լինի առաջին սկսողը և իր ուժերի  
համեմատ մասնակցի այն աշխատանքներին, վո-  
րոնք կատարվում են գյուղի առողջապահական  
գրությունը բարելավելու համար՝ իր կողմը գրա-  
վելով գյուղի ակտիվ տարրերին, ագիտացիա  
մղելով ընտանիքներում և գյուղական հավաքությ-  
ներում, ազացուցելով կեղտուության դեմ սրաց-  
քարելու անհրաժեշտությունը:

Ի՞նչպես կարող եւ դպրոցը գործնական պար-  
քար սկսել գյուղի առողջապահական գրության  
համար:

Դպրոցում համապատասխան նյութ մշակե-  
լով՝ աշակերտությունը շրջում եւ փողոցներն ու  
բակերը, ցուց եւ տալիս դրանց առողջապահա-  
կան գրությունը, բացատրում եւ կեղտուության  
պատճառները և դրանց համապատասխան ծրա-  
գիր եւ մշակում, թե ինչ անհրաժեշտ աշխատանք  
պիտի կատարեն, հաշիվ են կազմում, թե վոր-  
քան ժամանակ և աշխատանք եւ պետք փողոցնե-  
րը մաքրելու, ջրանցքներ փորելու, աղբը հավա-  
քելու, հորերն ու փոսերը խճաքարով լցնելու և

ալին համար։ Այս աշխատանքի մշակման արդյունքները կարելի յե գյուղական հավաքույթներում զեկուցի ձևով դուրս բերել և գործնական միջոցներ առաջարկել։


Բայց միայն այսքանուվ չե կարելի բավարպել։ Այդ աշխատանքը կարող ե արձագանդ չդանել բնակչության մեջ, վորը կարող ե չտաշակցել դպրոցին՝ նրա սկսած աշխատանքուն։ Այդ ժամանակ դպրոցը պետք ե ուղղակի սկսի գործով ազգել, այսինքն՝ պետք ե իր շուրջը հավաքի դյուղի յերիտասարդությունը՝ պիոններներին, կոմիերիտականներին, յեթե կան, և նրանց աջակցությամբ աշխատի՝ բնակչության մեջ շարունակելով համառ կերպով ազիտացիա մղել հակառառողջապահական յերևույթների դեմ պարելու համար։

Յեթե դպրոցը հարսաբերի բավականաչափ կարողություն, մեթոդականություն, հաստատակամություն և կարողանա իր ուժերն ու հնարավորությունները ճշգրիտ կերպով հաշվի առնել, այդ գեպքում, վաղ թե ուշ, մեծերն իրենք կողնեն դպրոցին՝ դյուղի համար աարվող նրա հասարակական աշխատանքի մեջ։ Անհրաժեշտ ե ավելացնել, վոր վերը մեր ցուց տված մեթոդը միակը չե։ Դպրոցն այս գործին կարող ե և ուրիշ կերպ մոտենալ։ Կարենըն այն ե, վոր դրպ-

լոցը այս կամ այն ձեռվլ ցուց տա բնակչութիւնը հակառառղջապահական պարմանները, իր կողմը գրավի բոլոր նրանց, ով հասկանում ե դպրոցի առաջ զրված խնդիրները, ով գյուղական հասարակութիւնն կողմն ե, և, չեթե հարկ լինի, ցուց տա որինակով, թե ինչ կարելի լի անել չենց սրանով ել դպրոցը կարող կլինի գյուղի վրա ապրող գործոններից մեկը հանդիսանալ:

Ահա թե ինչպես ենք պատկերացնում մենք դպրոցի պարփառը գյուղի անմաքրութիւնն գեն։ Բայց չե՞ վոր գյուղական խրճիթներն ել մաքուր չեն, և բոլորին ել հայտնի յե, վոր գյուղացին ապրում ե առողջապահական զզվելի պարմաններում, վոր նա հասկացողութիւնն չունի անհատական ու հասարակական առողջապահութիւնն մասին։ Այն ժամանակ միայն, յերբ նա դալիս և շրջանալին կամ զավառալին ամբուլատորիա, այնտեղ նա տեսնում ե պայծառ պլակատներ, ուր նկարված ե նրա ընտանեկան անբարեկեցութիւննը, և վորոնք տգիտացիա յին մղում մաքուր ողի, լուսի ու գյուղական խրճիթների մաքրութիւնն համար. ով գիտե, գյուղացին առանց ուրիշի ոգնութիւնն հասկանում ե, արդյոք, իր տեսածը, թե արդ գույնզգույն պլակատը նրան թիւն ե ոսոկ մի գեղեցիկ նկար միայն։

Դպրոցը մեծ գեր ունի կատարելա առող-



ջապահության գաղափարը դլուղական ընտանեկան կենցաղում արմատացնելու համար։ Մեր դպրոցների մեծամամությունը համապատասխան կոմպեքս անցնելու ժամանակ ծանոթացնում է յերեխաներին ընդհանուր և անհատական առողջապահության պահանջներին՝ սովորեցնելով նրանց ուշադրություն դարձնել մարմնի, հագուստի, ամանների և այն մաքրության վրա։

Դպրոցի կողմից տված այն ունակությունները, վորոնք անմիջականորեն բեկլում են յերեխայի գիտակցության մեջ, փոխադրվում են ընտանիքները և յերեխն ամբողջ մի հեղաշրջում առաջ բերում, վորը և հաճախ դրական արդյունքներ և տալիս Բայց այս դպրոցների հետ, վորոնք տանում են այս հակադական աշխատանքը, կարելի յե պատահել և այնպիսի դպրոցների, ուր կոմպեքսներն անցնում են «նստակյաց» ձեռվով, ուր յերեխաները, իրեն արդյունք այդ կոմպլեքսների, գործնական ունակություններ ձեռք չեն բերում, իրենց գիտելիքները չեն կապում առորյա գործնական կյանքին։

Դպրոցը առաջին հերթին պետք է յերեխաներին առողջապահական ունակություններ տա՝ իր պատերի մեջ կազմակերպելով սանիտարական հանձնաժողովներ, ազդելով հենց յերեխաների իրենց փոխադարձ կոնտրոլով, առաջադրելով պա-

հանջներ՝ ձեռքերի, վզի, յերեսի մաքրության,  
հետեւելով, վոր այդ ասպարիզում աշխատանքը  
տարվի ուսման բոլոր տարիներում և շարունակ-  
վի ամբողջ տարին և վոչ թե միայն կոմպեքսի  
հետ կապված:

### ՀՐԾԵԶ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԱ.

Հրդեհը գյուղի պատուհան եւ Յեղել են  
գեղքեր, յերբ գյուղերն ամբողջովին այրվել են:  
Շինարարության գործի ռացիոնալ տեխնիկավի  
պահանջների համեմատ մեր գյուղը գեռես շուտ  
չի վերաշինվի: Հրդեհը հսկայական մնաներ ե  
հասցնում, իսկ հաճախ ել ամբողջովին քայլա-  
յում ե գյուղերի տնտեսությունը:

Դպրոցը պետք է ոգնության հասնի գյուղին  
հրդեհից նախազգուշացնելու գործում, վոչ միայն  
բացատրություններով, այլ մի շարք գործնական  
միջոցներով, դարձյալ կապելով իր այդ աշխա-  
տանքը Պետական Գիտական Խորհրդի ծրագրերի  
և ուսմունքի հետ:

Ամենից առաջ՝ դպրոցը հետազոտելով կա-  
րող ե պարզել տարիների ընթացքում առաջ յե-  
կած հրդեհների և այրված շինությունների թիվը  
և նրանց գլխավոր պատճառները, շինություն-  
ների կուտակումը, ծառատունկի բացակայու-  
թյունը, ցախի կույտերը, ջրամբարի բացակա-

բութիունը և այլն... Ի՞ացի զրածնից, դպրոցը կառող ե պարզել, թե գրուզացիների վհր մասը և վհր չափով ե ապահովագրում իր կարքը, անառուններն ու շինությունները։ Ամբողջ այս նյութը դպրոցը պետք ե մշակի, դրուբաննելի դիագրամմաներով արտահայտի, իսկ ուսուցիչը պիտի հոգ տանի, վոր տեղեկություններ ձեռք բերի ապահովագրության պայմանների և նրա վճարները մուծելու մասին։ Այս տեղեկությունների հիման վրա յերեխանները կարող են հաշվի առնել ապահովագրության ձեռնտվությունը և գյուղական հավաքույթներում, ծնողների վրա ազդելով, ապացուցեն գյուղի ապահովագրության անհրաժեշտությունը մի կողմից, և, մյուս կողմից, հրդեհից զերծ մնալու համար, տեղի պայմաններին համապատասխան կազմակերպությունների անհրաժեշտությունը՝ սկսած ծխնելուզները մաքրելուց մինչև ամբողջ հասարակության հրշեջմեքենա ձեռք բերելն ու կամավոր հրշեջների ընկերություն կազմակերպելը։ Իսկ դպրոցը ինքը, պիոններների, կոմյերիտմիության և յերիտասարդների ակտիվ մասի հետ, կարող ե գյուղում ծառեր տնկել, իբրև հրդեհի դեմ կռվելու միջոց, և տներն ազատել ցախից։

Այս աշխատանքն ամեն մի դպրոց կարող է տանել, քանի վոր «գյուղ» խորագրով կոմայլեքուն

անցնելիս չի կարելի ոչքաթող անել գյուղի  
հրդեհները։ Իսկ կոմպեքտները միայն այն ժամա-  
նակ կենսական նշանակություն կունենան, յերբ  
նրանք կենսական կոնկրետ մատերիալով կծա-  
վալվեն։

### ԴՊՐՈՑԻ ՏԵՂԵԿԱՏՈԽ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Վոր մեր գյուղն անզրագետ ու խավար և,  
վոր նա կարիք ունի մի շարք պարզաբանու-  
թյունների ու տեղեկությունների այն հարցերի  
վերաբերմամբ, վորոնք գյուղը կապում են ար-  
տաքին աշխարհի հետ, վոր նա կարիք ունի գործ-  
նականորեն կառարելու առորյա մանր գործերը՝  
սկսած ծրարի վրա հասցեներ գրելուց մինչև հիմ-  
նարկություններում գործի թղթեր ներկայացնելը,  
վոչվոք այդ մասին չի կասկածում, և մեր գյուղի  
իրականությունից մի շարք փաստեր գալիս են  
մեզ նույնը համոզելու։

Մինչև հիմա յել գյուղում ուսուցիչը ներ-  
կայանում ե միակ կուլտուրական ուժը. բնակ-  
չությունը գիտե այդ բանը և նրա մոտ ե գնում  
իր կարիքների համար, նրանից ե խորհուրդներ  
հարցնում ու բացառություններ ստանում։ Ու-  
սուցչի բնակարանը շատ անգամ բոլոր հարցերի  
համար մի տեսակ տեղեկատու բյուրո յե դառ-  
նում։ Դպրոցի աշխատակցի աշխատիսի կապը բնակ-

չութիան հետ պետք ե վսղջունել, իհարկե, բայց  
միևնույն ժամանակ ցանկալի լե, վոր դպրոցն  
իրեւ ամբողջական կոլեկտիվ, իր լերիտասարդ  
ուժերով, վորոնք վաղ թե ուշ կյանք պետք ե  
դուրս գան իրենց ինքնուրույն աշխատանքով,  
մասնակցություն ցույց տան այդ տեղեկատու  
աշխատանքներին, վորապեսզի այդ աշխատանքի  
միջոցով մի կողմից՝ լերիխաներն իրենք վորոշ  
փորձառություն ու տեղեկություններ ձեռք բերեն,  
իսկ մյուս կողմից՝ դպրոցը այստեղ ել հան-  
դես գա ընակչության աչքում իրեւ գյուղի կա-  
րևոր, անհրաժեշտ բաղադրիչ մասը։

**Միքանի դպրոց արդեն սկսել են տեղեկա-  
տու աշխատանք կատարել իրենց աշակերտու-  
թյան միջոցով։ անհրաժեշտ ե նրանց փորձն ըն-  
դորինակել, խորացնել և ընդարձակել։ Այս աս-  
պարիզում դպրոցը վորոշ անելիքներ ունի։**

Յերբ լերեխաները տեսնում են, վոր իրենց  
ընտանիքներում դժվարություններ են առաջա-  
նում գյուղխորհրդի, շրջանի կամ գավառի հիմ-  
նարկությունների հետ պաշտոնական փոխհարա-  
բերությունների ժամանակ, այդ դեպքում նրանք  
իրենց ծնողներին կարող են ցույց տալ դպրոցը,  
վորուեղից նրանք համապատասխան ցուցմունք-  
ներ կատանան։ (Իսկ ուսուցիչն, իհարկե, նախո-  
րոք պետք ե հայտնի լերեխաներին, վոր դպրոցը

կարող եւ իր վրա վերցնել տեղեկատու աշխատանքով բնակչության սպասարկումը, վոր յերեխաները կարող են դիմել դպրոցին այն բոլոր հարցերով, վորոնք չեն կարող լուծվել ընտանիքի ուժերով, անգրագիտության, անկարողության կամ անգիտության պատճառով, վոր այդ հարցերն ուսուցչի ոգնությամբ յերեխաներն իրենք կմշակեն):

Դպրոցի աշխատանքի այդ ճյուղին իբրև ուրինակ կարելի յե մատնանշել բազմաթիվ դիմումներ՝ հողային, տուրքերի, դատական գործերի, բանվորական ուժի պայմանագիր կնքելը և այն, չհաշվելով զանազան հիմնարկություններում ավելի պարզ դիմումներ գրելը:

Պրակտիկան ցուց եւ տալիս, վոր այս ասպարիզում, շատ քիչ բացառությամբ, դպրոցը յերեխաներին համարյա թե հմտություններ չի ընձեռում: Առաջին աստիճանի դպրոցի աշակերտները և նույնիսկ յերկրորդ աստիճանի դըպրոցից մանկավարժական տեխնիկումի ցածր դասընթացները ընդունվողները չեն տիրապետում պաշտոնական գրություններ գրելու տեխնիկային:

Հաճախ ուսուցիչն ասում ե, վոր ճեական գիտելիքները չեն կարող պարփակվել կոմպլեքսի մեջ, և կարդալու, գրելու, հաշվելու հմտություն ձեռք բերելու համար առանձին ժամեր են

հատկացվում. լենթադրենք այդպես ե. միթե չի  
կարելի տալ այդ ձևական հմտությունը գյուղա-  
կան իրականության կենդանի նյութերով: Յեզ  
ինչու գրքից արտագրելու և բնության զանա-  
գան նկարագրությունների հետ միաժամանակ  
չմտցնենք այնպիսի պրոպա, ինչպիսին ե ծրար-  
ների վրա հասցեներ, պայմանագրեր ու դիմում-  
ներ գրելը, անեն անդամ այդ բոլորը կապելով  
գյուղական առանձին տնտեսությունների կարիք-  
ների ու պահանջների հետ, մի բան, վորը և հնա-  
րավոր ե, և անհրաժեշտ:

Գյուղի հրատապ հարցերից մեկն ել հանդի-  
սանում ե տուրքերի հարցը. բավական և վոր  
գյուղացու հետ խոսես տուրքերի մասին (իսկ  
դրսից լեկողի հետ նրանք հենց իրենք խոսք  
կբանան), և անսպառ կդառնա այդ թեման: Մի  
գյուղացուց շատ են հարկ վերցրել, մյուսից՝  
քիչ, այսաեղ ավելի անասուն են հաշվել, մի այլ  
տեղ՝ անարդար կերպով են տուրքից ազատել  
և ազն. և հարցերի, կասկածների ու սխալների  
մի ամբողջ շարք ե առաջանում գյուղացիների  
մեջ միմիայն նրա համար, վոր նրանք չգիտեն  
հարկացին հաշվի տեխնիկան: Այս խնդրումն ել  
գովոցը կարող ե ոգտակար լինել գյուղին, իսկ  
ուսուցիչն, աշխատանքի ժամերին ստուգելով  
գյուղհարկի հարկաթերթիկները, կազատեր իրեն՝

տեղական կյանքից վերցրած նյութերի հիման  
վրա խնդիրներ կազմելու ավելորդ դժվարու-  
թյուններից:

ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂԱՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԱՄՊԱՐԵԶՈՒՄ

Մեր գյուղում գյուղատնտեսությունը չի  
կանգնած իր կոչման բարձրության վրա: Ճիշտ ե,  
վոր գյուղացու կողմից նկատվում ե ձգտում՝ իր  
գյուղատնտեսության ձեռքը բարելավելու, բայց  
նրան պակասում ե գիտություն, գործին տեղակ,  
հմուտ անձանց ցուցմունքներ և, բացի դրանից;  
նրան պակասում ե իր անտեսությունը բարեփոխ-  
ված միջոցներով զարգացնելու փորձառություն:  
Թվում ե մեզ, վոր իր ուժերով դպրոցը կարող եր  
վորոշ շափով, գյուղատնտեսության միքանի ճյու-  
ղերում, զարգացնել աշխատանքը՝ անտեսության  
ռացիոնալացման ասպարիզում, զարգացնել գործ-  
նականորեն՝ նպատակ դնելով հատկապես փորձը,  
ցուցը, վորն ավելի համոզիչ կլինի գյուղացցիու-  
թյան համար, կողնի նրան բարեփոխություններ  
կատարելու և խոշոր արդյունքների համելու.  
իսկ լեռեխանները, գործնականում տանելով այդ  
աշխատանքը, ձեռք կբերեն վորոշ փորձառու-  
թյուններ, ձեռք, վորոնցով անպայմանորեն նրանք  
կոգտվեն իրենց ապագա ինքնուրույն կյանքում:

Գյաւղատնաւեսութիւնն ասպարիզում դպրոցի  
աշխատանքը մեծ մասամբ տարիում և դպրոցա-  
կան բանջարանոցի շուրջը, վորտեղ կատարված  
աշխատանքը, վոր գործնականորեն կիրարկվում  
ե բոլոր բանջարանոցային հողամասեր ունեցող  
դպրոցներում, համապատասխան եֆֆեկտ չի ա-  
ռաջացնում մի շատ պարզ պատճառով։ Բանջա-  
րանոցի բույսերը խնամելիս լերեխաներն զբաղ-  
ված են լինում իրենց ծնողների տնտեսութիւններ,  
իսկ ուսուցիչը լերեմն ինքն ե թողնում դպրոցը  
ամառվա ամիսներին, և այդպիսով դպրոցը, մնա-  
լով առանց աշխատող ձեռքի և առանց դեկավա-  
րութիւնն, ամայանում ե, ուստի և չի կարողա-  
նում կատարել իր առջև դրված խնդիրը։ Մրա-  
նից ե բղխուն և այն բացասական վերաբերմուն-  
քը, վոր միքանի դպրոցների աշխատակիցներ ցուց  
են տալիս բանջարանոցային հողամասերի նկատ-  
մամբ։ Դպրոցների աշխատակիցների շրջանային  
կոնֆերենցիաներում հաճախ լավում ե, վոր բան-  
ջարանոցային հողամասերի աշխատանքի ար-  
դյունքներն իրենց ամբողջութիւններ մի բան են ցուց  
տալիս, թե՝ «ինչպես չպետք ե աշխատել բան-  
ջարանոցում», իսկ մոտից անցնող գյուղացի-  
ները ծիծաղում են, ասելով՝ «անունն ել գեռ  
կուլտուրական տնտեսութիւնն ե»։ Մեղ թվում  
ե, վոր բանջարանոցի շուրջը դպրոցի աշխատան-

քը պետք եւ վորոշ չափով ձեւափոխվի: Բանջա-  
մանոցալին աշխատանքը պետք եւ ավելի լուրջ  
դրվի, քան դրվում եւ դպրոցների մեծ մասի կող-  
մից, վորոնց կարծիքով բավական եւ միայն յե-  
րեխաներին փակ հիմնարկությունից մաքուր ող  
դուրս բերես, նրանց գրքից ու նամակներից  
կորես, դասարանի սովորական պարապմունքնե-  
րից հեռացնես, ուրիշ վոչինչ, պլրավ-գնաց:

Ինկատի ունենալով այն հանդամանքը, վոր  
բանջարանոցալին աշխատանքի յեւուն ժամանակ  
յերեխաներն զբաղված են լինում իրենց անտե-  
սության աշխատանքներով, մենք կարծում ենք,  
վոր դպրոցի աշխատանքը բանջարանոցի շուրջը  
պետք եւ կենտրոնացած լինի գլխավորապես բան-  
ջարանոցի հիմքը դնելու վրա, այսինքն՝ բույսեր  
տնկելու և նախնական խնամք տանելու վրա,  
և այս աշխատանքի ամբողջ ծանրության կեն-  
տրոնը պետք եւ ընկած լինի յերեխաների անհա-  
տական աշխատանքի վրա, զուգահեռ դպրոցում  
տարվող աշխատանքի ճեա, բայց ավելի փոքր  
մասշտաբով, փոքր բանջարանոցներում, ուր յե-  
րեխաները, մշակելով այս կամ այն նյութը, հա-  
մապատասխան արդյունքներ են ստանում: Այս-  
պիսով, դպրոցական բանջարանոցը դառնում եւ մի  
միջոց՝ յերեխաներին բույսերի աճեցման համար  
անհրամեշտ նախնական հմտություններն ու հոտ-

կացողությունները տալու։ Ամառային արձակուրդի սկզբեից դպրոցի բանջարանոցում յերեխաներն ազատվում են այդ աշխատանքներին մամնակցելուց, և այդ նույն աշխատանքը փոխադրվում է միայն իրենց տան բանջարանոցները։

Բայց դրանից չպետք ե յեզրակացնել, վոր դպրոցը չպետք ե ունենա իր դպրոցական բանջարանոցը։ Ընդհակառակը, շատ ցանկալի բան ե դպրոցական բանջարանոց ունենալը, և յեթե ուսուցիչը մշտապես ապրում ե դպրոցում, անկառկած, նա կարող ե գլուղական յերեխաներից ստեղծել այն ամուլը միջուկը, այն կորիզը, վորը հետաքրքրվում ե բանջարանոցային աշխատանքներով, շարունակ հակում ե դպրոցում տնկված բույսերին, խնամում ե և պարագաների սկզբին հասցնում վորոշ արդյունքների։ Յեթե մենք մատնանշեցինք, թե բանջարանոցի աշխատանքի ծանրության կենտրոնը պետք ե փոխադրել իրենց տնտեսության մեջ, այդ պարզապես նրա համար ե, վոր ընակչությունն ու յերեխաներն զգան, հասկանան դպրոցական հողամասի տվածոգուտները և այն դեպքում, յերբ բանջարանոցն ամառը մնում ե առանց ուսուցչի զեկավարության, կամ յերբ այս կամ այն նկատառումով չի հաջողվում յերեխաների խմբակներ կազմակերպել, վորոնք կարողանային իրենց վրա վերցնել դպրո-

յին կից հողամասի ամառալին աշխատանքները։  
Ի՞նչ ե յերեխաների աշխատանքը դպրոցա-  
կան բանջարանոցում, վորոշակի ասած։

Ամենից առաջ՝ դպրոցին կից հողամասում  
առանձնացնում են մի մակարդակ, վորի մեծու-  
թյունը պիտի համապատասխանի դպրոցի ուժե-  
րին։ Այդ մակարդակը բաժանվում է յերեք հա-  
վասար մասերի, յերեք դաշտի։ Այսպիսով՝ դպրոցն  
իր բանջարանոցալին անտեսության մեջ յեռադաշ-  
տան ցանքսաշրջանաւություն և մտցնում։ Առա-  
ջին մասը հատկացվում է կաղամբի, յերկրորդը՝  
վարունգի, իսկ յերրորդը՝ արմատապտուղների։  
Պարարտացվում է միայն առաջին հողամասը։  
Հետագայում այդ ցանած հողամասերում բան-  
ջարանոցալին կուլտուրաների ճշգրիտ հաջորդա-  
կանություն և հետևում, այսինքն՝ կաղամբը փո-  
խարինվում է արմատապտուղներով, վարունգը՝  
կաղամբով և արմատապտուղները՝ վարունգով։  
Սկզբում պարարտացնում են դարձյալ կաղամբի  
հողամասը և այն։ Բաժանված հողամասերում  
անց են կացնում գծեր, վորոնք ցույց են տալիս  
ածուների ուղղությունն ու չափը։

Յերեխաներն ուսուցչի ղեկավարությամբ  
փորում են ածուները, պատրաստում են, սեր-  
մեր են ցանում ու վերաանկում, վոռոգում են  
և այլն։ Տուները դպրոցն ինքը կարող է ողամ-

բասաւել։ Ցանկալի կլիներ, լեթե աշակերտության ցուց արվեր տունկերի շիթել անելու միջոցը, վոր բավական պարզ ե։ Դրա համար անհրաժեշտ է կաղամբի հողամասում զատել մի փոքրիկ տարածություն, ուր պետք է տեղափոխել տունկերը, հենց փոր 3—4 տերե բացվի՝ վաղորոք պոկելով տունկերի կոթերը։ Հողի մեջ տնկված բռւշերն առավագա ցըտից սպաշտապանելու համար անհրաժեշտ է դիշերը պահպանել ծղոտի ծածկոցով։

Մեր այս ցուց տված աշխատանքը կատարելով՝ յերեխաները հմտություն ձեռք կբերեն՝ ճիշտ կերպով վարելու բանջարանոցալին տնտեսությունը։ Սրան զուգընթաց, ինչպես մենք արդեն ասացինք, յերեխաներն այդ աշխատանքը կատարում են ավելի փոքր մասշտաբով, իրենց ծնողների բանջարանոցներում, ուր, մեծերի հետ համաձայնվելով, առանձնացնում են փոքրիկ ածուների շարան, ուր և աշակերտությունը մշակում է դպրոցից ստացած խնդիրները։ Այս խնդիրները նախորոք դրվում են դպրոցի կողմից.—յերեխաների մի մասը պետք է աշխատի աճեցնել կաղամբը, մյուսները վարունգի վրա պետք է աշխատեն, յերրորդ մասն՝ արմատական պտուղների վրա և այլն, ուսուցչի կողմից անհրաժեշտ դեկավարող ցուցմունքներ ու համապատասխան գրականություն ստորագրով։ Ամբողջ ամառվա ընթաց-

քում յերեխաները հսկում են իրենց բանջարաս-  
նոցներին, մաքեր են փոխանակում միմյանց հետ  
իրենց ստացած արդյունքների մասին, իսկ ան-  
հրաժեշտ դեպքում դիմում են ուսուցչին՝ խոր-  
հուրդներ հարցնելու:

Աշնանային պարագմունքների սկզբին յերե-  
խաների մոտ կուտակվում ե հսկայական քանա-  
կությամբ նյութ, վորը մեծ հաջողությամբ կա-  
րող ե ոգտագործվել դպրոցական աշխատանքնե-  
րի համար: Դպրոցը, իհարկե, կարող ե և պետք  
ե ինքը կազմակերպի դպրոցական ցուցահանդես,  
կամ պետք ե մասնակցի շրջանային ցուցահան-  
դեսներին՝ ցուցադրելով իր աշխատանքներն ու  
նվաճումները: Ցանկալի յե դպրոցական ցուցա-  
հանդեսների կազմակերպությունը կապել «Բերքի  
տոնի» հետ՝ գրավելով գյուղի, շրջանի ակտիվ  
բնակչությունը՝ մասնակցելու այդ տոնակատա-  
րության: Այս ուղղությամբ դպրոցը կապ հաս-  
տատելով կոմիերիտամիության, պիոներական կազ-  
մակերպությունների և գյուղի կուլտուրական  
ուժերի հետ՝ կարող ե մեծ աշխատանք կատա-  
րել, վոր գնահատելի յե նրանով, վոր մի կողմից  
նաև իր կողմը կգրավի գյուղի ուշադրությունն ու  
համակրանքը, իսկ մյուս կողմից յերեան կրերի  
գյուղի նվաճումների արդյունքներն ամբողջու-  
թյամբ ու յերեխաներին հասարակական կազմա-

կերպությանների զործում փողձառաւթյուն կրնակնելու:

Ի՞նչ կարող ե ցուցադրել դպրոցը «Բերքի որվա» հետ կապ ունեցող արդ ցուցահանդեսին, քանի վոր նա արդ ցուցահանդեսը կազմակերպում ե ինքնուրուցն կերպով՝ իր աշխատանքի ընթացքում:

Պարզ ե, իհարկե, վոր ցուցադրութերի ընտրությունը պետք ե բղիսի տեղի հնարավորություններից, բայց և այնպես անհրաժեշտ ե, վոր արդ ցուցահանդեսները միակողմանի չլինեն, որինակ՝ բանջարանոցալին, կամ արդ ցուցահանդեսներին չպետք ե տալ. միայն նեղ դպրոցական բնոււթ, չպետք ե լերևան բերել դպրոցի աշխատամիջը միայն բանջարանոցալին տնտեսության մեջ։ Վերջինս անբավարար կլինի միայն դպրոցի աշխատանքը լերևան բերելու բանջարանոցալին տնտեսության բնագավառում։ Իրերը գնահատվում են համեմատությամբ։ Դրա համար ել ցուցահանդեսներում լերեխաների միջոցով պետք ե գրավել ամբողջ գյուղը, ամբողջ դպրոցական շըրջանը, իսկ յեթե հնարավորություն լինի՝ պետք ե գրավել և խորհրդալին տնտեսությունը կամ գորևե գյուղական կուլտուրական տնտեսություն մեկ ուրիշ շրջանից, յեթե արդպիսի տնտեսություն չկա դպրոցական շրջանում։ Ցուցահան-

զեմներում պետք ե յերևան բերել դպրոցի ու  
տնտեսության թե նվաճումները և թե նրանց  
անհաջողությունները։ Բացի դրանից, ցուցահան-  
դեսները պետք ե լրացվեն հասկանալի վեր-  
տառություններով, վորոնք պիտի բացատրեն, թե  
ինչպիսի պարմաններում և վորտեղ են ձեռք բեր-  
ված համապատասխան արդյունքներ։ Ինչպես  
մենք ասացինք, ցուցահանդեսներում պետք ե  
յերևան բերել վոչ միայն բանջարանոցային տըն-  
տեսությունը, այլև հողագործությունը, այգե-  
գործությունը, արոտաբուծությունը և անամսա-  
բուծությունը. վերջինս, ինարկե, պետք ե յերևան  
բերվի առավելապես սարքավորման տեսակետից,  
այլ կերպ՝ ցուցահանդեսը շատ մեծածավալ դուրս  
կգա։

Անամսաբուծության վերաբերմանը դպրոցը  
կարող ե ցուցադրել այն մոդելները, վոր նա շի-  
նուած ե անալին կենդանիների մասին համապա-  
տասխան թեմաներ անցնելու ժամանակ, որի-  
նակ՝ թոշուններին կեր տալու փոքրիկ տաշտ և  
այն, համեմատելով ալդ բոլորը սարքավորման  
մոդելների հետ, վորոնք գործնականում կիրառ-  
վում են գյուղական տնտեսության մեջ։ Ցուցա-  
հանդեսներում պետք ե ցուցադրվին և դիագրամմա-  
յիննյութեր, վորոնք մշակված են դպրոցի կողմից՝  
նրա կոմպլեքսալին պարապմունքների շրջանում և

վարը պիտոի ընութագրի, որինակի համար, ավելի  
գյուղի հողաշինարարությունը՝ համեմատելով արդ  
շրջանի առաջնակարգ տեղի հետ, — արդեգործու-  
թյունը, մեղվաբուծությունը, մարդագետնաբու-  
ծությունը, անասնաբուծությունը, անասունների,  
շենքերի ու կահուցքի ապահովագրությունը, գյու-  
ղը կենդանի ու անկենդան կահուցքով ապահո-  
վագրելը, գյուղի հանար հանրամատչելի գյուղա-  
տնտեսական գրականություն և այլն... Մեզ թվում  
ե, վոր այս տեսակետից գյուղական իրականու-  
թյունն այնքան հարուստ ե, վոր ցուցադրման  
իրերի պակասություն լինել չի կարող, իրեր, վո-  
րոնք այնքան մեծ արժեք ունեն գյուղի համար,  
վորոնք նրա արտացոլումն են և վորոնք առաջ  
են քաշում մեր գյուղացիությունը՝ բարելավելով  
նրա տնտեսության ձեերը և հավասարեցնելով  
շրջանի արտակարգ կուլտուրական տնտեսության  
հետ։ Այս հարցում կարեորն ե՝ մոտենալ գյու-  
ղացուն, վստահ լինել նրա համակրանքին դեպի այս  
խոշոր հասարակական գործը, պրոպագանդ մղել  
աշակերտության միջոցով՝ հավաքուլթներում, ա-  
պացուցելով, թե վորքան անհրաժեշտ ե մտքեր  
փոխանակել իրենց տնտեսության արդյունքների  
մասին, վորքան ել վերջիններս աննշան թվան։

Դառնալով գպրոցի աննուղղակի աշխատանք-  
ներին գյուղատնտեսության ասպարիզում, վոր

նա կատարում ե իր դպրոցական հողամասում,  
կարող ենք ասել, վոր յեթե յերեխաները վորոշ  
հետաքրքրություն ցուցաբերեն բանջարանոցավին  
տնտեսության մեջ, դպրոցը կարող ե շրջակա  
բնակչությանը ուեալ ոգնություն և ցուց տալ:  
Որինակի համար՝ գյուղը յերբեք ինքը չի պատրաս-  
տում իր բանջարանոցներում կաղամբի, ճակնդեղի  
և գոնգեղի (брюкв) տունկեր. այս դեպքում  
դպրոցն ոգտվում ե, յեթե գյուղը մոտիկ ե, գա-  
վառավին քաղաքից, իսկ լավագույն դեպքում՝  
գյուղական արդյունաբերական բանջարանոցավին  
տնտեսությունների ծառայությամբ: Ինչու դպրո-  
ցը, բարեհաջող պայմաններում, ոգնության չգա-  
գյուղին՝ ավելի եժան գնով այդ տունկերը մա-  
տակարարելու: Տունկերի տեղափոխության աշ-  
խատանքն ամբողջովին մատչելի յե դպրոցին. յե-  
րեխաներն աշնանը կարող են պատրաստել ածու-  
ները, վաղ գարնանը նորից փորել, ցանել՝ ընտ-  
րելով լավացրած սերմերը, վորոնք պիտանի յեն  
տեղի պայմաններին: Ռուսաստանի կենտրոնական  
գոտում մայիսի վերջերին սովորաբար արդեն  
տունկերը տեղափոխում են, այն ժամանակ, յերբ  
գեռ դպրոցը շարունակում է իր պարապմունք-  
ները: Այսպիսով, տունկերը տեղափոխելու պրո-  
ցեսոր, սկսած գեռ նախապատրաստական աշխա-  
տանքներից մինչև իրենց աշխատանքի իրացումը,

կատարվում ե յերեխաների աշքի առջև Աշխատանքն ամբողջովին ավարտ լինելու բնույթ ե կրում, դպրոցի համապատասխան ջանքերի արդյունքներն ակնհայտ են դառնում, դպրոցն ոգնում ե գյուղին, նա մոտ ե կանգնում գյուղացուն, վորի աշքում բարձրանում ե դպրոցի արժեքը, և արգեն վստահությամբ կարող ենք ասել, վոր նման դպրոցը գյուղացիների կողմից իրեն անհրաժեշտ աջակցություն միշտ կդանի:

Գյուղում պատղաբուծությունը բավարար չափով չի զարդացած, չնայած վոր բավական պարզ գործ ե: Դպրոցը կարող ե և այս գործում ոգնության գալ գյուղին, մի կողմից՝ յերեխաներին պատղատու բուշաբերի մշակման հմտություն ընձեռելով և մյուս կողմից՝ նրանց կուլտուրան զյուղական տնտեսության մեջ տարածելով: Այս նպատակով դպրոցն իր հողամասում կազմակերպում ե պատղաբեր թփերի բազմացման գործը, որինակ՝ հաղարձի, փշալից հաղարձի, վորոնք հեշտությամբ են պատվաստվում և կարգում մեկ կամ յերկու տարվա ճյուղերից, և մորենու, վորը բազմացվում ե արմատի պատվաստումով: Այդպիսով, իր հողամասում միքանի տեսակ թփեր ստանալով, դպրոցը հետագայում նրանց կուլտուրան տարածում է գյուղացիների մեջ: Պետք ե յենթագրել, վոր հենց վոր դպրոցը համապատասխան եֆֆեկտ

ստանա, գլուղացիներն, այդ բանն իմանալով,  
իրենք կշտապեն դպրոց գալ՝ անհրաժեշտ ցուց-  
մունքներ կամ ոգնություն ստանալու համար:

Մեր համառոտակի նշած աշխատանքը դպրո-  
ցական հողամասում, հասկանալի յե, վոր նշում  
և աշխատանքի միայն միքանի որինակելի ուղե-  
նիշ գլուղատնտեսության ասպարիզում, բայց  
իեթե դպրոցը կարողանար իրագործել և այն փոք-  
րիկ աշխատանքը, ինչ վոր մենք նշեցինք, կամ  
տեղական պայմաններից բղխող մեկ ուրիշ աշ-  
խատանք՝ նույն մասշտաբով, այդ արդեն դպրոցի  
կողմից մեծ նվաճում կիներ և գլուղական հա-  
սարակության մեջ իր պատվավոր տեղը կբռներ:

### ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Մեր դպրոցների համարյա մեծամասնությու-  
նը պատի լրագիր և հրատարակում: Յեթե քնններք  
պատի լրագիրը, կարող ենք համոզվել, վոր նա  
գլուղի հասարակության մեջ չի բռնում այն տե-  
ղը, վոր ամենայն իրավամբ պետք եր տալ նրան:  
Նա առաջմն մի միջոց և միայն՝ յերեխաններին  
գրելու վորոշ ունակություն տալու, այդ թերթի  
միջոցով դպրոցի, իրենց՝ յերեխանների կյանքը  
քննադատելու համար. այսպիսով, պատի լրագի-  
րը պարփակվում է դպրոցական պատերի մեջ և  
միայն դպրոցին և պատիանում:

Զժիստելով իրականում այն դրական ոգուաը,  
վոր տալիս ե պատի լրագիրը՝ մենք յենթադրում  
ենք, վոր լրագիրը գյուղում կարող ե ավելի մեծ  
դեր կատարել, քան կատարում ե ներկայումս: Այն  
բոլոր դեպքերում, յերբ դպրոցը գյուղում միակ  
կուլտուրական կենտրոնն ե ներկայանում (իսկ  
այդպիսի դպրոցներ հազվադեպ չեն), դպրոցի վրա  
յեր բարգվում գյուղական մասսայի վրա կուլտու-  
րապես ազգելլ, նրան դաստիարակելը, գյուղի  
բացասական յերևութների դեմ պարարելլ. դըպ-  
րոցն ե, վոր պիտի քաջալերի այն բոլոր դրական  
յերևութները, վոր կարող են և պետք ե որի-  
նակ ծառալեն մյուսներին:

Բայց վոչ միայն այս դեպքում, այլ նաև բո-  
լոր դեպքերում պատի լրագրի բովանդակությու-  
նը միայն դպրոցի և յերեխաների կյանքով չպետք  
ե սահմանափակվի: Պատի լրագրի եջերում պետք  
ե շոշափվեն գյուղական կյանքի խնդիրները և,  
ընդհանուրապես, գյուղական հասարակայնության  
հարցերը:

Վոչվոք չի կասկածում, վոր միայն դպրոցի  
ուժերով այստեղ շատ բան անել չի կարելի. այս  
աշխատանքին պետք ե կանչել գյուղի բոլոր ակ-  
տիվ տարրերը և առաջին հերթին՝ գյուղական յե-  
րիտասարդությունը: Այնտեղ, ուր գոյություն  
ունի կոմյերիտմիություն և պիոներական կազ-

մակերպություն, նրանց հետ միասին պետք է  
սերտ կապ հասաստվի պատի թերթի կազմակեր-  
պելու և այդ թերթին մասնակցելու համար։ Ան-  
հրաժեշտ ե այնպես անել, վոր բոլորը, վորքան  
ակտիվ վոր կա գյուղում, համախմբվեն դպրոցի  
շուրջը, վոր դպրոցը դառնա այն բնական կեն-  
տրոնը, վոր պիտի ազդի գյուղական մասսայի վրա,  
վոր գյուղացիությունը սովորի նայել դպրոցին  
վորպես մի կազմակերպության, վորը կանգնած  
ե գյուղի կողմը, գյուղական հասարակության շա-  
հերի կողմը։ Այս ասպարիզում լրագիրն առաջ-  
նակարգ դեր պետք ե խաղա։

Մեր մատնանշած խնդիրն իրագործելու հա-  
մար անհրաժեշտ ե կազմակերպել պատի թերթի  
հասարակական ընթերցում։ Այսպես, որինակ,  
պատրաստելով դպրոցի թերթի հերթական համա-  
րը, տոն որերին դպրոցը հրավիրում ե գյուղի ամ-  
բողջ բնակչությունը թերթի ընթերցմանը։ Ցան-  
կալի է, վոր այդ ընթերցումից առաջ տեղի ու-  
նենա փոքրիկ զեկուց՝ գյուղացիներին հետա-  
քըրքը թեմաների շուրջը, իսկ ընթերցումից  
հետո՝ գեղարվեստական բաժին՝ արտասանու-  
թյուն, յերգեցողություն և բեմադրություն։

Թերթի ընթերցման համար դպրոցը պետք  
ե համապատասխան կերպով նախապատրաստվի,  
այսինքն՝ այս կամ այն հոդվածը, բանաստեղ-

ծությունը կարդալու համար յերեխաներ ընտրի,  
իսկ ուսուցիչը պետք ե նախորոք յերեխաներին  
ցուցմունքներ տա, թե ինչպես պետք ե կարդալ:  
Կարդալուց հետո անհրաժեշտ ե թերթը դպրոցի  
շենքում կախել իտես ընդհանուրի:

Դպրոցական կոլլեկտիվը թերթի հրատարակ-  
ման խնդրում պետք ե հայտնաբերի հնարավոր  
չափով մեծ հմտություն՝ թերթի թե արտաքինի  
և թե բովանդակության հարցում։ Պետք ե աշ-  
խատել, վոր գրությունները լինեն ընթեռնելի,  
ցանկալի յե տպագրական տառերով, հոդվածները  
խոշոր վերնագրերով ու դիտողություններով։ Թեր-  
թում տեղ պետք ե ունենան և պայծառ գույնե-  
րով ներկված նկարներ, վորոնք կապ ունենան  
գրվածի բովանդակության հետ։ Իսկ ինչ վերաբե-  
րում ե բովանդակությանը, այդ խնդրում շատ  
դժվար ե վորեւ կոնկրետ ցուցմունք տալ այն  
պատճառով, վոր թերթն իր բովանդակությանը  
պետք ե արտահայտի տեղի շահերը, որվա կա-  
րեւոր հարցերը, գյուղին հարազատ վոգին և այն  
բոլորը, ինչ վոր հավասարապես հարազատ ե և  
մեծերին, և փոքրերին։ Տեղական այս նյութե-  
րին զուգընթաց, անշուշտ, պետք ե տեղ տալ  
նաև ամբողջ ԽՍՀՄ-ում և, ընդհանրապես, աշ-  
խարհում ընթացիկ ժամանակի ընթացքում կա-  
տարվող առանձնապես կարեւոր անցքերի մասին

համառոտ տեղեկությունների։ Այդ աեղեկությունները պետք ե ամփոփել թերթերի տվյալների վրա հիմնված։ Թերթում անհրաժեշտ ե տեղափորել այս կամ այն լոգունգը, մանավանդ՝ յեթե հրատարակությունը կապ ունի հեղափոխական, դպրոցական կամ այլ տօների հետ։

Կարող ե պատահել, վոր դպրոցական թերթին միանգամից չհաջողվի գյուղի ուշադրության կենարոնը դառնալ, իրեն համապատասխան տեղը գրավել. այս գեազում դպրոցը չպետք ե հուսահատվի և դադարեցնի իր աշխատանքը, այլ, ընդհակառակը, նա պիտի շարունակի՝ գրավելով այդ աշխատանքի մեջ նախ՝ գյուղի ավելի պետիվ ուժերը, իսկ ապա՝ մնացած մասսան։ Այստեղ ուսուցիչն ավելի քան խորհելու բան ունի։ Գլուղական հանարակայնության համար մղվող պայքարը մի դժվար ու էրկարատև պայքար ե, բայց և այնպես ավելի արժեք ունեցող արդյունքների կհասնի։

## ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱ- ՆՈՒՄ

Գլուղական խրճիթ-ընթերցարանը, վորի շուրջը պետք ե կազմակերպվի գլուղացիության գիտակից, ավելի առաջադեմ մասը՝ նպատակ ունենալով կուլտուրական շինարարության ընթաց-

քում ավելի հաջողությամբ առաջ գնալու և մի-  
ջոցներ ձեռք առնելու, վորպեսզի կուտուր-կըր-  
թական կազմակերպություններ ստեղծվեն, — այս  
խնդրում խրճիթ-ընթերցարանը շատ պակասու-  
թյուններ ունի: Վերջիններիս պատճառները բազ-  
մազան են, բայց գլխավորն այն ե, վոր խրճիթ-  
վարը, ժամանակի և ուժերի պակասության պատ-  
ճառով, չի կարողանում գյուղական մասսայի բո-  
լոր պահանջները բավարարել: Մենք յենթագրում  
ենք, վոր դպրոցը կարող ե ոգնել խրճիթ-ընթեր-  
ցարանին՝ լուծելու թե մի շարք կազմակերպչա-  
կան-տեխնիկական խնդիրներ, և թե կարող ե  
զարգացնել կուտուր-կըրթական աշխատանքները:  
Հենց սրանով ել դպրոցը մի կողմից դուրս կգար  
կուտուր-կըրթական աշխատանքների ընդարձակ  
ասպարեզ, իսկ մյուս կողմից՝ յերեխաները խըլ-  
ճիթ-ընթերցարանների աշխատանքների միջոցով  
փորձառություն ձեռք կբերեն կոլեկտիվ աշխա-  
տանքի մեջ, կխորանան գրքի ու լրագրի աշխա-  
տանքի մեջ, իսկ հետագա իրենց ինքնուրույն  
կյանքում կվարժվեն դիմել խրճիթ-ընթերցարա-  
նին գյուղական կյանքի հիվանդության հարցերի լուծ-  
ման համար:

Թե ի՞նչ ե կոնկրետ կերպով դպրոցի աշխա-  
տանքը խրճիթ-ընթերցարանների շուրջը, կաշխա-  
տենք նախագծել գօնե փոքր չափով դպրոցին

մատչելի ու համապատասխան աշխատանքները՝  
յելակետ ունենալով խրճիթ-ընթերցաբանի իրա-  
կան կարիքները։

### ԱՐԱԳԻՐ ԿԱՐԵԼԸ

Յուրաքանչյուր խրճիթ-ընթերցաբանի հա-  
մար լրագիր կարելը մի անհրաժեշտ, տեխնիկա-  
կան աշխատանք եւ։ Այդ աշխատանքը հաջողու-  
թյամբ կարող են կատարել դպրոցի ցածր խմբի  
աշակերտները՝ խրճիթվարի դեկավարությամբ։

Այս կամ այն խումբը, վոր իր վրա կվերցնի  
խրճիթ-ընթերցաբանից հանձնարարված այս աշ-  
խատանքի կատարումը, իր միջից կարող եւ 2—3  
հոգուց հերթապահություն նշանակել՝ հարմարե-  
ցնելով թերթին ստանալու որվա հետ։

Եենթադրենք, թե խրճիթ-ընթերցաբանը լրա-  
գրերն ստանում եւ շաբաթը յերկու անգամ. թեր-  
թը կարդալուց յերեք որ հետո յերեխաները վո-  
րոշված դաստաններով կարում են թերթերը՝ ըստ  
անունների, ժամանակագրական կարգով և ժողո-  
վում պահելու համար։ Հետազայում այս թերթե-  
րը հանդես են գալիս վորպես տեղեկատու նյու-  
թեր և տրվում են առանձին պահանջով։

Մեր մատնանշած այս աշխատանքը կատա-  
րելով՝ յերեխաները խրճիթվարին ազատում են  
տեխնիկական մանր աշխատանքներից, այսպիսով

Նրան հնարավորություն տալիվ ոգտագործելու իր  
ուժերն ավելի բարդ աշխատանքների վրա, և  
միևնույն ժամանակ, իրենք ինսամքով կվարվեն  
թերթի հետ:

### ԳՐՔԵՐԻ ՑԱՆԿ ԿԱԶՄԵԼԸ

Խրճիթ-ընթերցարանում գտնված գրականու-  
թյան և կահուչքի մասին տեղեկություններ տա-  
լու համար անհրաժեշտ ե ցանկ կազմել. ցանկը  
պետք ե ունենա յերկու որինակ (վորտեղ այդ  
հնարավոր ե, քանի վոր գլուղական խրճիթ-ըն-  
թերցարանները սովորաբար քիչ քանակությամբ  
գրքեր են ունենում), վորոնցից մեկը պահպում  
ե խրճիթվարի մոտ, իսկ մյուսը ծառայում ե  
խրճիթ-ընթերցարան այցելողներին տեղեկու-  
թյուններ տալու և նրանից ինքնուրույն կերպով  
ոգտվելու համար։ Ցանկի այս որինակը պետք ե  
կամ պատից կախված լինի, կամ դրված սեղանի  
վրա։

Խրճիթ-ընթերցարանում գտնված գրքերի  
ցանկ կազմելը նույնպես կարելի յե հանձնել  
դպրոցի յերեխաներին՝ խրճիթվարի ղեկավարու-  
թյամբ։ Յերեխաներն ել կըրացնեն այդ ցանկը՝  
խրճիթ-ընթերցարանի ամեն մի նոր գրականու-  
թյուն ստանալիս։ Ցանկը պետք ե բաժանված  
լինի մասերի՝ ըստ խրճիթում ընդունված սիստեմի,

Յերեխաների տիս խոմբակը, վոր իր վրա յե  
վերցնում գրքերի ցանկ կազմելը, կարող ե խըր-  
ճիթ-ընթերցարանի համար հասկանալի դիագրամ-  
մանկարել՝ «Ի՞նչպիսի գրքեր ունի խրճիթ-ընթեր-  
ցարանը», ներկայացնելով այստեղ գրքերի քա-  
նակը, ըստ բաժինների, կոմ սյունակների ձեռվ,  
կամ գրքերի ձեռվ։ Յանկալի յե խրճիթ-ընթեր-  
ցարանի ինվենտարիզացիայի աշխատանքը խորա-  
ցնել՝ հավաքելով նյութեր, վորոնք պիտի բնորո-  
շեն, թե խրճիթ-ընթերցարանը կազմակերպման  
որից քանի գրքով ե լրացվել, այդ ամբողջ հա-  
վաքած նյութը գրաֆիկայի ձեռվ արտահայտելով։

Յերեմի խրճիթ-ընթերցարանում նկատվում  
ե գրքերի տեղափոխություն, առժամանակ ոզ-  
տագործելու նպատակով։ Յանկալի յե այս գեղ-  
քում ևս հաշվառման լենթարկել բոլոր գրքերը,  
խրճիթ-ընթերցարանում գոյություն ունեցող գրք-  
երի մի տեսակ այլ գրացուցակ կազմելու ձեռվ։  
Հետագայում, խրճիթ-ընթերցարանի հաշվետվու-  
թյան ժամանակ, այդ նյութը կարող ե պիտանի  
լինել։

### ԳՐՔԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Թե ինչպիսի գիրք ե դուք գալիս գյուղին,  
թե ավելի շատ ինչ տեսակ գրքերի պահանջ ե  
զգում գյուղը, ինչպիսի խնդիրներ են հետաքրքը-

իում գյուղին, — հետաքրքիս և կենսական նշանաւ կութիուն ունեցող աշխատանք ե այս, վորի արդյունքները հնարավորութիուն կտան խրճիթ-ընթերցարանին իսկապես բավարարելու բնակչութիան կուլտուրական պահանջները, իսկ մյուս կողմից՝ այս աշխատանքով շահագրգռված են մեր հրատարակութիունները, վորոնք «գեղջկական» գնահատութիանն են սպասում:

Բարձր խմբակների յերեխաները, խրճիթ-ընթերցարաններում համապատասխան հերթապահութիուն պահպանելով, կարող են տանել այդ աշխատանքը խրճիթվարի ղեկավարութիամբ, նշանակելով այս կամ այն գրքի պահանջը, գրելով գյուղացիների գնահատականները գրքերի մասին և գրի առնելով այն գրականութիան պահանջը, վորը չի դանվում խրճիթ-ընթերցարանում:

Նյութերի կուտակումից հետո դպրոցը կարող ե այդ նյութերը մշակել, իսկ սրանից ստացած արդյունքների մասին կարող ե մտքերի փոխանակութիուն անել հրատարակչութիունների կամ (Համառուսաստանի Գլխադրուսվարին կից, նահանգական, շրջանալին) ինքնակրթութիան ոգնող հանձնաժողովի հետ:

Այսպիսի կապը դպրոցի համար միայն պիտանի կարող ե լինել:

Գյուղացիների կարծիքները (գրքերի մասին)

հաղորդելու ժամանակ անհրաժեշտ և մատնանշել, թե վոր ընթերցողին ենք ինկատի առնում, գրագետ, թե կիսագրագետ, ինքնուրույն տնտեսատեր և, թե գեռահաս և, աղքատ և, թե հարուսաւ և այլն:

Բայց քիչ ե, իհարկե, յեթե դպրոցը միայն հաղորդեր իր գիտողությունները. անհրաժեշտ և, վոր գյուղական մասսան ինքը մասնակցի այդ գրքերի ցուցակագրման՝ անմիջականորեն կամ խրճիթ-ընթերցարանի միջոցով։ Այս նպատակով դպրոցը կարող է խրճիթ-ընթերցարանի համար մի շաբք պլակատներ պատրաստել, կոչ անելով գյուղացիններին կազ հաստատելու հետեւալ կերպով, որինակ՝

Գիրքը կարդալուց հետո չմոռանա՛ն նրա մասին քո դիտողությունները տալ խնդիրվարին։

Գրեցեք գրերի սասին գնահատականներ։

և այն։ Այդպիսի կազի իրական արդյունքները շուտով յերևան կդան։

ՊԱՅՔԱՐ ԳՐԻԵՐԻ «ՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ» ԴԵՄ

Մեր խրճիթ-ընթերցարաններում գրքերի այսպիս ասած «յուրացումը», նրանց ժամանա-

կին շվերադարձնելը, կամ բոլորովին կորցնելը  
սովորական յերեռւլիթ ե, վորը յերբեմն հասնում  
է անթուլլատրելի չափերի: Անհրաժեշտ ե այս  
չարիքի գեմ պայքարել, քանի վոր գրքերի «յու-  
րացումը» զրկում է խրճիթ-ընթերցարանին, վոր  
առանց այն ել աղքատ ե գրականությամբ, գիրքը  
ուցիոնալ կերպով ոգտագործելու հնարավորու-  
թյունից՝ գյուղին գրքեր հայթայթելու գործում:

Խրճիթվարի համար մենակ շատ դժվար ե  
գլուխ հանել «յուրացրած» գրքերը դուրս հանե-  
լու գործում: Խրճիթ-ընթերցարանին այս դեպ-  
քում կարող ե ոգնության գալ դալրոցը: Յերե-  
խաները կարող են ուսուցչի դեկավարությամբ և  
խրճիթվարի առաջարկով հետեւալ պլակատները  
գրել.

Գիրքը վերջացնելուց հետո, վերադարձո՛ւ  
առանց ուսացնելու:

Վերցրած գիրքը խնամքով պահիր, հիշի՛ր,  
վոր նրա համար պատասխանատու յես:

Գիրքը ուսացնելով ուրիշին գրկում ես այդ  
գիրքը կարդալու հնարավորությունից:

և այն:

Յերեխաները խրճիթվարից զրքերի «յուրացման» վերաբերյալ նյութերը հավաքելով՝ կարող են իրենց ուսուցչի դեկավարությամբ մշակել, դիագրամմաներ նկարել և դեկուցել խրճիթընթերցարանի Խորհրդին:

Բացի այս նախազգուշական միջոցներից, դպրոցը կարող է և աշխատանք կատարել այդ «յուրացըրած» զրքերը հավաքելու գործում, յեթե, իհարկե, վերջնականապես կորած չեն այդ զրքերը:

Յերեխաներն այս նպատակով գյուղերի մեջ բաժանվելով, լեթե խրճիթ-ընթերցարանների շրջանում կան «յուրացըրած» զրքեր, այդ զրքերի ցանկը հետոներն են վերցնում, այցելում են զրքերը չվերադարձնող անձնավորություններին և անմիջապես իրենք են հանձնում զրքերը խրճիթվարին կամ հաստատում են զրքերի կորուստը:

Նման աշխատանքը ժամանակ առ ժամանակ կարելի յե կրկնել, իսկ բնակչությունը, վորոնոգտվում է խրճիթ-ընթերցարանի զրքերով, այս հիշեցնելով՝ կվարժվի զրքերը ճշտապահությամբ վերադարձնելուն:

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ԼՐԱԳՐԻ ՎՐԱ

Լրագրի աշխատանքը խրճիթ-ընթերցարանում սկսոք ե կենտրոնական տեղ բռնի, բայց, ինկատի ունենալով, վոր այդ աշխատանքը ժամանակին

ահաղին կորուստ ե պատճառում, մասսայական  
խրճիթ-ընթերցարանում խրճիթվարի ծանրաբեռ-  
նության պատճառով, յերբեմն ել նրա անկարո-  
ղության պատճառով, այս աշխատանքը միշտ չի  
տարվում: Իսկ այդ աշխատանքի անհրաժեշտու-  
թյունը թելաղըվում ե մի շարք նկատառությունե-  
րով: Մի կողմից՝ լրագիրը միշտ կենդանի նյու-  
թեր ե տալիս, որքա նյութեր, վորոնց մեջ լրիվ  
կերպով յերևան գան գյուղի կյանքը, գործարան-  
ները, կուսակցությունը, կոմսոմոլը, զյուղատնտե-  
սության և արդյունաբերության ասպարիզում  
ձեռք բերված նվաճումները, բոլորը, վոր պիտի  
բնութագրեն մեր Միության փոխհարաբերու-  
թյունները մնացած յերկրների հետ, լուսաբանելով  
խորհրդացին շինարարության հերթական խնդիր-  
ները, իսկ մյուս կողմից՝ գյուղական բնակչու-  
թյան մեծամասնությունը լրագիր կարդալ չգիտե-  
և վերջինս իր կյանքում կիրարկելի մի բան ու  
պահանջ չի դարձրել, լրագիրը գյուղում լիովին  
քաղաքացիական իրավունք չի ձեռք բերել (մի-  
ջին թվով 13 տանն ընկնում ե 1 լրագիր:—Վ. Մ  
ոլատովի զեկուցումը Համեկ (բ) 14-րդ համա-  
գումարում):

Անհրաժեշտ ե թերթն առաջ տանել գյու-  
ղում, ագիտացիա մղել թերթի համար և հետա-  
քրքրել բնակչությունը լրագրով: Միանդանայն

բնական ե, վոր ազգպիսի աշխատանքի կենարոնը  
խրճիթ-ընթերցարանը պետք և լինի, խակ աշա-  
կերտները, ոգնելով նրան թերթի աշխատանքի  
մեջ, մի շարք արժեքավոր ունակություններ ձեռք  
կրերեն, կառվորեն լրագրով ոգտվել և, անկաս-  
կած, իրենց ապագա կրանքում լրագրին իրեն  
համապատասխան տեղը կտան:

Բացի դրանից, թերթի հետ կտպված աշխա-  
տանքը պարտադիր կերպով թելագրվում և Պե-  
տական Գիտական Խորհրդի ծրագրերի կողմից:  
Այսպես, Ուսուցման չորրորդ տարվա մեջ մտնում  
ե «ՌՄՖԽՀ-ի և այլ յերկրների պետական տնտե-  
սությունը», «Ռուսաստանի և այլ յերկրների պե-  
տական կազմը»: Ուսուցման յերրորդ տարվա մեջ—  
«Տեղական յերկրի տնտեսությունը», «Հասարա-  
կական հիմնարկներ»: Ուսուցման յերրորդ և չոր-  
րորդ տարիների այս տեսակի ծրագրային մա-  
տերիալը (վարը և ցուց և տվել փորձը) կարող  
ե մեծ հաջողությամբ մշակվել, յեթե այդ աշխա-  
տանքի համար մեջ բերված լինի և լրագրային  
մատերիալ:

Կոնկրետ կերպով ի՞նչպես և հասկացվում  
աշխատանքի հետագա կապը թերթի հետ և դրա-  
բոցի աշխատանքը խրճիթ-ընթերցարանում:

Աշխատանքի ավելի պարզ տեսակն այն կլինի,  
վոր դպրոցում յերեխաները կմշակեն լրագրային

Նլութը ուսուցչի ղեկավարությամբ և այն, վոր  
հետագայում գյուղացիներին կծանոթացնեն խըր-  
ճիթ-ընթերցարանում մշակված աշխատանքի ար-  
դյունքներին:

Այս նպատակով գպրոցը նույն լրագրից յեր-  
կու որինակի յերաժանորդագրվում: Դպրոցը թեր-  
թը ընտրում ե տեղական պայմանների համեմատ:

Մեզ թվում ե, վոր ամենից ավելի համա-  
պատասխանը . «Գյուղացիական Լրագիր» (Крестъ-  
янская газета) թերթն ե\*, վոր իր գրվածքով մատ-  
չելի յե գյուղացիներին, գնահատելի յե բովան-  
դակությամբ և հարուստ ե պատկերագարդու-  
թյամբ,—առավելություններ, վորոնցից վոչ մեկը  
թերթի աշխատանքում չի կարելի անտես առնել:  
Յեթե գպրոցը գեռևս վորոշ չափով նյութական  
հսարավորություն ունի, այդ գեղգում կարելի լի  
խորհուրդ տալ նրան, վոր տեղական լրագիր ել  
ստանա, վորի նյութը, անկասակած, ավելի մոտ  
կինի գպրոցական շրջանին: Ընդհանրապես գոր-  
ծի հաջողությունը կախված ե լրագրի հաջող ըն-  
տրությունից:

Հետագայում յերեխանները, մշակելով թերթի  
նյութերը, քաղվածքներ են անում հոգվածներից,  
նկարների, տեղեկությունների, տեղեկագրերի,

\* Մեզնում դրան փոխարինում ե «Մաճկալք-ը»  
Տ. Թ.:

լրագրի յերկար հոդվածները փոխարինում են համառոտ շարադրություններով և տվյալ թերթի հիման վրա դիագրամմաներ են կազմում և, այս բոլորը միասին վերցրած, վորոշ սիստեմով կազցնում են թղթի վրա, վորի ծավալը պետք ե համապատասխանի հավաքած նյութերին:

Այն թուղթը, վորի վրա կացնում են լրագրային նյութերը, պետք ե ունենա խոշոր վերնագրեր, որինակ՝ «Ի՞նչ են գրում թերթերում», և հնարավորության չափ պայծառ գծագրված ու գունավորված՝ ուշադրություն գրավելու համար։ Գրությունները պետք ե լինեն ընթեռնելի, նյութերը պետք ե պատկերազարդել քաղվածքներով կամ յերեխաների նկարներով, իսկ յեթե հնարավոր ե՝ դիագրամմաներով, վորոնց ամենակարևոր տեղերը պետք ե ընդգծել կարմիր կամ կապույտ մատիտով։ Ցանկալի յեր, վոր ամբողջ նյութը խմբակցությունների բաժանվի, վորոնք նշանակվում են, նայած թերթի ընտրած որինակին. այսպես, որինակ՝ «Կյանքը արտասահմանում», «Անցքերը ԽՍՀՄ-ում», «Բարձրացըրեք գյուղատնտեսությունը» (գյուղատնտեսության վերաբերյալ խորհուրդներ), «Մեր գավառի կյանքից» և այնուհացի դրանից, անհրաժեշտ ե այդ թղթի վրա տեղ հատկացնել այս կամ այն լողունգին կամ դիմումներին, թերթին բաժանորդագրվելու համար։

իրեն արժեքավոր ձեռնարկ լրագրալին գործում հանձնարարում ենք Յարեգլազաղսկու «Լրագիրն իրը քաղլուսաշխատանքի միջոց» գրվածքը, («Газета, как орудие политпросветработы». Изд. «Красная Новь»): Այսպիսով, լրագրալին նյութը մշակելով, փոխադրվում է խրճիթ-ընթերցարան, վորտեղ աշակերտները կաղմակերպում են հասարակական ընթերցում, վորին հաջորդում է ընթերցողի կողմից կազմակերպված դրույց. կարդալուց հետո այդ նյութը կախ է տրվում աչքի ընկնող տեղում:

Ցանկալի յեթ թերթի հետ կապ ունեցող գըպըցի աշխատանքն ավելի խորացնել և չսահմանափակվել միայն քաղվածքներ կացնելով, նրանց սիստեմի տակ դնելով ու պատկերագրելով: Այսուես, որինակ՝ դպրոցը կարող եր խրճիթ-ընթերցարանի համար մեր Միության աշխարհագրական քարտեղը կազմել, վորն արժեքավոր ձեռնարկ կրիներ ընթերցման ժամանակ: Կարելի յեպլակաների այս աշխատանքը ընդարձակել՝ թերթի հետ քաղաքական գործիչների և անցքերի ալբում կազմելով:

Այս մասին անհրաժեշտ ցուցմունքներ կարելի յեղանել մեր մատնանշած Յարեգլազաղսկու գրքում:

Այսպիսով, ընդարձակելով լրագրի գործը,

դպրոցը յերեխաններին ավելի ուժեղ կծանոթացներ կյանքին և նրանց ունակություններ կլնձեռներ քննադատելու անցքերը, քննադատելու և վերջիններիս գնահատականը տալու, իսկ մյուս կողմից դյուղական բնակչությունն անընդհատ կտեսներ յերեխանների աշխատանքը, վորը դպրոցի համար անպայման նշանակություն ունի, և նրանց աշխատանքի ոգնությամբ ավելի հաջող կերպով առաջ կերթար նոր շինարարության ճանապարհով, մի ճանապարհ, վոր այնքան կարեոր ու անհրաժեշտ ե մեր գյուղի համար:

### ԼՐԱԳՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Մեր կուլտուրական շինարարության կարեվորագույն հարցերից մեկը պետք ե լինի լրագրի տարածումը գյուղում։ Մեզ մոտ շատ քիչ տընտեսություններ կան, վորտեղ լրագիրն աւորչապահանջներից մեկը դարձած լիներ։ Թերթին բաժանորդագրվելու համար դպրոցը պետք ե ամեն միջոցներով, համառ կերպով ագիտացիա մղի։ Այս մեծ գործի մի մասն արդեն կատարված կարելի յե համարել այն աշխատանքով, վոր դպրոցը տանում ե լրագրի հանդեպ, քանի վոր յերեխանները, սովորելով կարդալ ու հասկանալ լրագիրը, անկասկած, կվարժվեն հետագայումն ել այդ սովորությունն իրենց ինքնուրույն կյանքում

մտցնել։ Բայց այս դեռ շատ թե քիչ հեռավոր  
ապագայի հարց եւ Դալրոցը պետք ե ձգտի այն  
բանին, վոր յերեխաները նսարավոր չափով մեծ  
հետաքրքրություն տածեն դեպի լրագիրը, վոր  
նրանք իրենց հերթին այդ հետաքրքրությունը  
փոխադրեն իրենց ընտանիքները, ապացուցեն ու  
համոզեն իրենց ծնողներին թերթին բաժանոր-  
դագրվելու անհրաժեշտությունը։

Դալրոցականները կարող են ավելին անել՝  
կազմակերպվելով ու պրոպագանդա մղելով լրագրի  
համար։

Այս նպատակով դալրոցի բարձր խմբերից  
յերկուական-յերեքական հոգի կարող են ցրվել  
դալրոցի շրջանի գյուղերը, վորպեսզի գյուղական  
հավաքությներում ցուց տան լրագրին բաժա-  
նորդագրվելու անհրաժեշտությունը՝ նախորոք ու-  
սուցչից այդ խնդրի վերաբերյալ անհրաժեշտ ցուց-  
մունքներ սահմանալով, ունենալով իրենց հետ այդ  
գյուղին հարմար լրագրերի անունների ցանկն ու  
նրանց արժեքը։ (Լավ կլինի, յեթե յերեխաների  
այս աշխատանքի ժամանակ ներկա լինի և ինքը՝  
ուսուցիչը)։

Յեթե առաջին անգամից յերեխաներին չհա-  
ջողվի ուեալ արդյունքների հասնել, այդ դեպքում  
վոչ թե նրանք կիսառ պետք ե թողնեն սկսած  
աշխատանքը, այս պետք ե կրկնեն և վերջիվերջու-

ապացուցեն գյուղացուն, վոր վերջիվերջո թերթին բաժանորդագրվելը ծխելու համար զնած թղթից մի փոքր թանգ ե նստում:

Յերբ արդեն պատրաստի հող կլինի բաժանորդագրվելու համար, անհրաժեշտ է անմիջապես անցնել այդ գործի կազմակերպմանը: Բաժանորդագրման գործն իր վրա պետք է վերցնի խըրձիթ-ընթերցարանը: Բաժանորդագրվել ցանկացողների հասցեները կտրելի չե հայտնել մի բրանկի վրա՝ փոխադրվող փողի հետ միասին: Լրագիրն ստանալուն պես դպրոցը պետք է աշխատի անմիջապես լրագիրը հասցնել բաժանորդներին՝ իրենց տները: Անհրաժեշտ է թերթը ստանալուց հետո շատ շուտով տեղ հասցնել, հակառակ դեպքում հետաքրքրությունը դեպի թերթը զգալի կերպով կթուլանա, վորով դպրոցն ինքը կքանդի իր սկսած գործը:

### ԿԱՐՄԻՐ ԱՆԿՑՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ

Խրճիթ-ընթերցարանում կարմիր անկլուն կազմակերպելն ամբողջովին կարելի չե հանձնարարել աշակերտությանը՝ խրճիթվարի ղեկավարությամբ: Ինչպես հայտնի չե, խրճիթ-ընթերցարանը միջոցներից զուրկ է, այս պատճառով ել կարմիր անկլան աշխատանքը հնարավոր չի լինի ընդարձակել: Դպրոցն ինքը կատարած կլինի

ալիք աշխատանքը, յեթե տեղի նյութերի հիման  
վրա, համաձայն Իլիչի տված պատվիրանների,  
ցուց տա բոլոր այն ձեռք բերած նվաճումները,  
վոր ունենք վերջին ժամանակներս, և յեթե կա-  
րողանա տանել այն ճանապարհով, վոր ամրաց-  
նում ե մեր տնտեսությունը:

Այս խնդրի իրագործման ընթացքում դպրոցը,  
իհարկե, պետք ե խուսափի կարմիր անկյունը  
վորմանկարչությամբ կազմակերպելուց, յեթե  
այդ անկյունը ներկայանում ե միայն Իլիչի պատ-  
կերների, նրա հետ կապ ունեցող անցքերի, նրա  
կյանքի ու նրա աշխատանքի հետ կապ ունեցող  
հավաքածուների անկյուն։ Յանկալի յէ, իհարկե,  
նկարներով ու քաղվածքներով ցուց տալ Վ.՝  
Իլիչի ամրող ուղին, բայց այդ բոլորի հետ  
անհրաժեշտ ե և ցուց տալ, թե ի՞նչ չափով  
ենի մենի իրազործում նրա ուսմունքը կյանքում,  
և թե ի՞նչ ե անհրաժեշտ անել սոցիալիստական  
շինարարության գործում, վորի սկիզբը դրել ե  
կարմիր Հոկտեմբերը։

Կաշխատենք որինակներով ցուց տալ, թե  
ի՞նչ նյութեր պետք ե տեղափորել կարմիր ան-  
կյունում։

Կանգ չառնելով պատկերների ու զանազան  
քաղվածքների վրա, վորոնք քիչթե շատ ընդհանուր  
են մեր բոլոր դպրոցների «անկյուններին»՝ կմատ-

նանշենք այն պլակատների անհրաժեշտությունը, վորոնք կապ ունեն Իլիչի այս կամ այն պատվերի հետ, միաժամանակ ցուց տալով նրանց աշխատանքը՝ համաձայն այդ պատվերների. վերցնենք, որինակի համար, անգրագիտության լուծարքը. այստեղ էերեխաները կարող են զբի առնել հետեւալ պլակատները.—«Անգրագետ էերկիրը չի կարող բարձրացնել իր տնտեսությունը», իսկ ներքեւ տեղափորել նույնը դիագրամմաներով, թե վորքան բնակչություն կա գյուղում, վորքանն են դրանցից գրագետ կամ անգրագետ, ինչպես և կանանց ու տղամարդկանց գրագիտությունը, դպրոցական տարիք ունեցող ինչքան էերեխաներ կան, նրանցից քանին են դպրոց հաճախում, գյուղում քանի տնտեսություն կա, դրանցից քանին են թերթին բաժանորդագրված և այն և այն։ Որինակի համար՝ «Կոռպերացիան միջոց և տնտեսության ամրապնդման» պլակատը կարելի յէ պատկերացնել դիագրամմաներով, վորոնք կը բնորոշեն գյուղական տների կոռպերացիայի մեջ մատցնելն ու կոռպերատիվի աշխատանքը, գյուղական տնտեսությունների քանակը, գյուղատընտեսական սպառողական և արդյունաբերական կոռպերացիայի անդամների քանակը, քանի կոռպերատիվ և նախորոք կտավհատ, կանեփ, կաշի, հաճար, վարսակ պատրաստել, վորքան տպրանք

ե ծախվել, ինչ քանակությամբ և ինչ լավացրած  
սերմեր ե նա մատակարարել իր անդամներին,  
գյուղական սերմերն ինչ քանակությամբ են  
զտված, ինչ միջոցներ են ձեռք առնված, և ինչ  
ե արված անասնապահությունը լավացնելու հա-  
մար, ինչպես են մատակարարվում գյուղացինե-  
րին գյուղատնտեսական գործիքները: Յեթե կոո-  
պերատիվ ունի արդունաբերական ձեռնարկու-  
թյուն, որինակի համար՝ ալյուրի գործարան,  
ջրաղաց, պանրագործարան և այլն, այն ժամա-  
նակ անհրաժեշտ ե ներկայացնել և այդ ձեռնար-  
կությունների աշխատանքը:

«Գյուղատնտեսության համար յերեքդաշտայան  
յեղանակը հնուց մնացած մի չարիք ե» պլա-  
կատը պատկերազարդել վորեե գյուղական տըն-  
տեսության սահմանամեջ տիրապետությամբ՝ հաշ-  
վելով յերկու հողերի միջև յեղած անջրպետը,  
քանակը, նրանց տարածությունը և ընդհանուր  
մակարդակը, դրանից յեզրակացնելով, թե ինչ-  
քան հող զուր տեղը կկորչի սահմանամիջման ժա-  
մանակ մի տնտեսության և սուբողջ գյուղի հա-  
մար և այս պատճառով նա ինչքան հացից կզրկվի,  
ցուց տալ սխեմանով յեւաղաշտայան և բազմա-  
դաշտայան ցանքսաշրջանառությունները, ցուց  
տալ, թե յեւաղաշտայան յեղանակից ինչպես պետք  
ե տնցնել բազմադաշտանին, հաշվի տոնել ամբողջ

մուտքը թե առաջնի և թե յերկրորդի ժամանակ,  
բացի դրանից, ցուց տալ, թե քանի անսեսու-  
թյուն խոտի ցանքս և արել և ազն և ազն, և  
այդ բոլորը ներկայացնել դիազրամմաներով։

Այսպիսի և նման շատ աշխատանքներ կա-  
րելի յե տանել կարմիր անկյան շուրջը՝ այդ աշ-  
խատանքները կառուցելով գյուղական տեղա-  
կան մատերիալի հիման վրա և անմիջապես կա-  
պելով շրջանի գյուղի ուսումնասիրության հետ,  
ձեռք բերած նյութերի հիման վրա ծավալելով  
մեր շինարարության դինամիկան և ցուց տալով  
այդտեղ մեր բնակչության մասնակցության առ-  
տիճանը։

Այստեղ կարելի յե հայտաբերել և գյուղ-  
խորհրդի կազմը, և բնակչության և հատկապես  
կանանց մասնակցության չափը հասարակական  
աշխատանքներում, և խորհրդային իշխանության  
հարկային քաղաքականությունը վերջին յերկու-  
տարիներում տվյալ գյուղի վերաբերմամբ և ազն։

Կարմիր անկյունը, տեղական մատերիալնե-  
րով հարուստ, կարող ե վորպես խոշոր նյութ  
ծառայել գյուղաստեսի, կոռպերացիալի և իրեն՝  
ուսուցչի մի շարք գեկուցումների համար։

ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԵՐԾՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐԻՆ

Այս վերնագրի տակ մենք հասկանում ենք  
գլխավորապես յերեխաների մասնակցությունը  
նախապատրաստական աշխատանքներին՝ կապ-  
ված ագիտացիալի հետ, վորոնց նպատակն ե-  
վերընտրել գուղխորհուրդը, շրջգործկոմը, այլ և  
կոռպերատիվին ու այլ կազմակերպություններին  
աջակցող որդանները։ Պետք ե ասել, վոր միքա-  
նի տեղ այդպիսի աշխատանք տարվում ե դպրո-  
ցի կողմից, վորոնք և դրական արդյունքներ են  
տալիս։ Յերեխաների մասնակցությունը վերընտ-  
րական կամպանիայում ինչնում ե։ Դպրոցն իրեն  
նպատակ դնելով վերընտրություններին մասնա-  
կից անելու բնակչության մեծամասնությունը՝  
պայմանավորվում ե, հենց վոր համապատասխան  
կազմակերպություններում վերընտրություններն  
որակարգի հարց են դառնում, և ցրում ե ընտ-  
րական ժողովների ծանուցագրերը։ Պրակտիկան  
ցույց ե տվել, վոր ծանուցագրերի հանձնումը,  
լրացնելով այն, վոր ընտրական ժողովներին ներ-  
կա լինելը պարտադիր ե, ունենում ե այն հետե-  
վանքը, վոր այդ և նման տեսակի ժողովներին  
մասնակցողների թիվը գնալով ավելանում ե։  
Դժբախտաբար անհրաժեշտ ե հայտնել և այն, վոր  
մանր կոտապերատիվ կողմակերպությունների ան-

դամնելին ընդունված չեւ ուղարկել անվանական ծանուցագրեր։ Այն ժամանակ ուսուցիչը պետք է ստիպի, վոր անպարհան ձեռք առնվի արդ միջոցը, այդ ծանուցագրերը գրելու գործը յերեխաներին թողնելով։

Բայց սրանով չի վերջանում դպրոցի աշխատանքը. վերընարություններից միքանի որ առաջ դպրոցը գրում և համապատասխան սլակատներ ու լոգունգներ, որինակ՝ «Բոլորը գյուղինորհրդի վերընտրություններին», «Ընտրեցեք գյուղինորհրդում գործունքա հասարակական աշխատակիցներ», «Կուլակին տեղ չպետք եւ տալ գյուղինորհրդում», «Կանալք, մասնակցեցեք վերընտրություններին», «Գիտակցորեն ձայն տվեք դյուղինորհրդի թեկնածուներին» և այնու կոոպերատիվների ժողովների համար կարելի յեւ, որինակի համար, հետեւյալ սլակատները գրել. — «Կոոպերացիան կոչված եւ ամրացնելու գյուղատնտեսությունը», «Կոոպերացիան չքափորի ու միջակի բարեկամն ե», «Գնանակոոպերատիվի ընտրություններին», «Կոոպերատիվում գնելով դու պայքարում ես կուլակառատրականի գեմ», «Մասնակցելով ժողովներին դու ամրապնդում ես կոոպերատիվի հզորությունը»։

Այս սլակատներն ու լոգունգները գրելով, դպրոցը փակցնում եւ գյուղում կամ շրջանում և

տըլովիսով բնակչության ու շաղրաւթյունը գրավում  
 դեպի վերընտրությունները։ Բացի դրանից, դրավ-  
 րոցը կարող է ոգտակար լինել ժողովի համար  
 դիագրամմային նյութեր պատրաստելով, վորն  
 առանձնապես հեշտ է կոոպերատիվներից վերցրած  
 թվերի հիման վրա անել։ Այդ դիագրամմաները  
 կծառային վորպես ցուցադրական պատկեր՝ կոո-  
 պերատիվի տարած աշխատանքի զեկուցման ժա-  
 մանակ։ Կոոպերատիվների մասին հետեւալ որի-  
 նակը կարելի յե բերել. — կոոպերատիվի անդամ-  
 ների թվի աճումը, կոոպերացված բնակչության  
 տոկոսը, համեմատած գյուղի շրջանի ընդհանուր  
 բնակչության հետ, կոոպերացիային մասնակցող  
 կանանց տոկոսը, վորքան ապրանք և ծախված, ով  
 և ինչ գումարի ապրանք են գնել (պետ. որդան-  
 ներ, կոոպերացիա, մասնավոր առևտրականներ,  
 տնայնագործներ), գյուղատնտեսական ինչպիսի և  
 վորքան մթերք և պատրաստված, հաշվետու ժա-  
 մանակաշրջանում կոոպերատիվի ծախսերը և այլն։

Անկասկած, այս ցուցադրումը կպարզաբանի  
 զեկուցումը, ավելի հասկանալի ու մատչելի  
 կդարձնի ժողովին։

### ՀՐԱՊԱՐԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ

Ում հայտնի չե, վոր գաշտալին աշխատանք-  
 ների ժամանակ գյուղական յերեխաները մնում

են գեռահամների խնամքի տակ և նույնիսկ փակվում են գյուղական հեղձուկ խրճիթներում. սրանից առաջ են գալիս զանազան դժբախտություններ, նույնիսկ հրդեհ, իսկ մյուս կողմից ել յերեխաներին խնամելը գեռահամների համար, բացի դժվար լինելուց, այնպիսի մի աշխատանք ե, վոր նրանք չեն կարող նույնիսկ գլուխ բերել:

Դպրոցը պետք ե աշխատի փրկել գյուղը յերեխաներին խրճիթներում անխնամ թողնելու հետևանքներից, նա պետք ե հրապարակ կազմակերպի, վորը կարելի յե այնպես շինել, վոր հավասարաշափ հետաքրքրական լինի յերեխայի, դեռահասի և, նույնիսկ, չափահաս յերիտասարդության համար:

Միանալով գյուղի պիոներներին ու կոմյերիտմիության, դպրոցը կարող ե արդ հրապարակը կազմակերպելու հարցը դնել գյուղական հավաքությներում, ցուց տալով, թե ինչքան անհրաժեշտ ե գյուղի տված ոգնությունն ու աջակցությունը. Իսկ այդտեղ մեծ աջակցություն պետք չե գյուղի կողմից. 10—15 սալ մաքուր (յեթե կարելի յե՝ գետի) ավագ և 2—3 սլուն՝ ճլորթի շինելու համար:

Դեռահամները հաճուքով կգան ճլորթի խաղալու, վորը շինված ե յերկու սլուների վրա՝ գերանի վրայով գցված թոկերով, իսկ նրանց

Փոքրիկ յեղբայրներն ու քույրիկներն ուրախությամբ կխաղան մաքուր ավաղի հետ՝ զանազան խաղեր ննաբելով։ Տոն որերին առանձնապես այդ հրապարակը կկենդանանա, իր կողմը գրավելով գլուղական յերիտասարդությունը՝ իր խաղերով, ճլորթիով, վորոնք բավական են կազմակերպման սկզբնական շրջանում։ հետադաշում դպրոցը կարող ե դիմել կոռպերատիվին՝ ֆուտբոլի զնդակ, կրոկետ և այլն ձեռք բերելու համար։

Այս հրապարակը կազմելով՝ դպրոցն իր շատը կիամախմբի ամեն հասակի յերեխաներին—թե նախադպրոցական և թե արտադպրոցական։

Այստեղ մեզ կարող են առարկել, վոր հրապարակի կազմակերպումը ղեկավար ե պահանջում, այնինչ ուսուցիչը ամառը չի կարող այդ դործի ղեկավարությունը իր վրա վերցնել։ Բայց չպետք ե մոռանալ, վոր, տանը մնալով, յերեխաներն ելի մնում են անպաշտպան և դեռ ավելի վատ պահմաններում, քան նրանք կարող են լինել հրապարակում, վորտեղ մաքուր ոդ և արև ե, վորտեղ յերեխան շարժողության մեջ ե, չի տիրում և գտնվում ե իր հասակակիցների շրջանում։ Իսկ այստեղ ղեկավար կարող ե հանդիսանալ կոմմունիստական յերիտասարդությունը, մանավանդ աղջիկները։

Մենք կանդ առանք հասարակական աշխատանքի՝ համեմատաբար սակավ ձևերի վրա, բայց այդ չի նշանակում, վոր չկան այնպիսի խնդիրներ, վորոնց լուծմանը դպրոցն իր ուժերին համապատասխան մասնակցություն ցույց չտա, և այդ չի նշանակում, վոր դպրոցը կարող ե և պետք ե միայն այդքանով սահմանափակվի... Մենք այստեղ չենք շոշափում, որինակ, հետեւալ հարցերը.—դպրոցի կողմից հեղափոխական տոներ կազմակերպելը, դպրոցական ցուցահանդեսները, ծառատուների քարտուղարությունը, դպրոցական տոները և այն։ Արանց մասին կան և շարունակում են լույս տեսնել բավական գրականություն և համապատասխան հոգվածներ՝ մեր մանկավարժական հանդեսներում։

Յեզրափակելով այս բոլորը, մի անգամ ել անհրաժեշտ ե ընդգծել, վոր հասարակական աշխատանքի ծավալման գործում դպրոցը մենակ չպետք ել լինի, նա գյուղի բոլոր հասարակական և կուլտուրական ուժերի հետ միասին պետք ե աշխատի, առաջին հերթին, կոմիերիտմիության ու պիոներական կազմակերպությունների հետ։  
Նրա աշխատանքի հաջողության գրավականն այդ ե։


## ՑԱՆԿ

	Եջ
Գլուղական դպրոցի հասարակական աշխատանքը	3
Գլուղի անունը վերտառող տախտակներ	10
Պայքար խմելու ջուր վերցնելու տեղերը կեղառուելու դեմ	13
Պայքար գլուղի առողջապահական դրության համար	14
Հրշեց միջոցների պրոպագանդա	19
Դպրոցի տեղեկատու աշխատանքը	21
Դպրոցի աշխատանքը գլուղատնտեսության ապարիզում	25
Պատի լրագիրը դպրոցում	37
Դպրոցի աշխատանքները խրճիթ-ընթերցարանում	41
Լրագիր կարելը	43
Դրքերի ցանկ կազմելը	44
Դրքերի ոգտագործման հաշվառումը	45
Պայքար գրքերը լուրացնելու դեմ	47
Աշխատանքը լրագրի վրա	49
Լրագրի տարածումը գլուղում	55
Կարմիր անկյուն՝ կազմակերպելը	57
Դպրոցի մասնակցությունը վերընտրան կամպանիաներին	62
Հրապարակ կազմակերպելը	64





(144)



ԳԻՒՅԸ 15 ԿՈՊ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039678